

Թմրանյութերի Եզակի Կոնվենցիա, 1961թ.
Փոփոխված 1961թ. Թմրանյութերի Եզակի Կոնվենցիայի 1972թ. Արձանագրությամբ

ՄԻԱՑՅԱԼ ԱԶԳԵՐ

Ցանկեր (Տես [Վերահսկվող Նյութերի Ղեղին Ցուցակը`
http://www.incb.org/e/index.htm](http://www.incb.org/e/index.htm))

Թմրանյութերի Եզակի Կոնվենցիա, 1961թ.
Փոփոխված 1961թ. Թմրանյութերի Եզակի Կոնվենցիայի 1972թ. Արձանագրությունամբ

Նախաբան

Կողմերը, Մտահոգված մարդկության առողջությամբ և բարեկեցությամբ, Ընդունելով, որ բժշկական նպատակներով թմրամիջոցների օգտագործումը շարունակվում է անհրաժեշտ մնալ ցավի և տառապանքների բուժման համար և, որ պատշաճ կերպով պետք է ապահովել այսպիսի նպատակների համար թմրամիջոցների առկայությունը, Ընդունելով, որ թմրամոլությունը շարունակվում է անհատի համար լուրջ չարիք մնալ և մարդկության համար ներկայացնում է լուրջ սոցիալական և տնտեսական բեռ, Հաշվի առնելով, որ թմրամիջոցների չարաչափման դեմ ուղղված արդյունավետ միջոցառումները պահանջում են համակարգված և համընդհանուր մոտեցում, Հասկանալով, որ այսպիսի համընդհանուր մոտեցումը պահանջում է նույն սկզբունքներով ուղղորդված և ընդհանուր նպատակներին ուղղված միջազգային համագործակցություն, Ընդունելով թմրամիջոցների վերահսկման բնագավառում Միացյալ Ազգերի իրավասությունները և ցանկությունը, որ համապատասխան միջազգային մարմինները պետք է այդ Կազմակերպության մեջ լինեն, Ցանկանալով կնքել միջազգայնորեն ընդունելի մի կոնվենցիա, որը կփոխարինի ներկայումս գործող թմրամիջոցների մասին համաձայնագրերը, սահմանափակելով այսպիսի թմրամիջոցների կիրառումը բժշկական և գիտական օգտագործմաննպատակով և ապահովելով այսպիսի նպատակներին և խնդիրներին հասնելու համար շարունակական միջազգային համագործակցությունը և վերահսկումը, Այսուհետ համաձայնվում են¹

Հոդված 1 ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

¹ ժ³ñĩáóÕ³ñáóÃÛ³Ý ÷³ëĩ³ÃáóÕÃ: ²ñÓ³Ý³.ñáóÃÛ³Ý Û³Ë³µ³ÝÁ, áñÁ ÷á÷áË»Ë ĸ ÁÛñ³ÝÛáóÃ»ñÇ ½²³Ĵ ĬáÝĩ»ÝóÇ³Ý, 1961Ã., Ĭ³ñ¹³óĩáóÛ ĸ ³Ûëã»ë`
§éáóÛÝ ²ñÓ³Ý³.ñáóÃÛ³Ý ĬáÕÛ»ñÁ!,
§Ð³ßĩÇ ³éÝ»Ëáĩ 1961Ã. ÁÛñ³ÝÛáóÃ»ñÇ ½²³Ĵ ĬáÝĩ»ÝóÇ³ÛÇ ¹ñáóÛÁÝ»ñÁ, ³ñĩĴ 1961Ã. Û³ñĩÇ 30-ÇÝ ÛÛáó ÛáññáóÛ! (³ÛëáóÑ»ĩ ĬáÝĩ»ÝóÇ³),
§ó³Ýĩ³Ý»Ëáĩ ÷áË»Ë ½²³Ĵ ĬáÝĩ»ÝóÇ³Ý!
§Ð³Û³Ó³ÛÝĩ»Ë »Ý!`

1. Բացառությամբ այն դեպքերի, երբ այլ կերպ է արտահայտված կամ որտեղ ենթատեքստով այլ բան է պահանջվում, ամբողջ Կոնվենցիայի մեջ պետք է կիրառվեն հետևյալ սահմանումները՝

a) «Տնօրենների Խորհուրդ» նշանակում է Թմրանյութերի Վերահսկման Միջազգային Տնօրենների Խորհուրդ:

b) «Կանաբիս» - կանաբիս բույսի ծաղկային կամ պտղային գլխամասերը (բացառությամբ սերմերը և տերևները, երբ դրանց հետ գլխամասեր չկան), որոնցից շիրային մաս չի անջատվել՝ դրանց տրված ցանկացած անվանմամբ:

c) «Կանաբիսի բույս» - կանաբիս տեսակի ցանկացած բույս:

d) «Կանաբիսի խեժ» - առանձնացված խեժը՝ հում կամ զտված, որը ստացված է կանաբիսի բույսից,

e) «Կոկայի թուփ» - Էրիթրօքսիլոն տեսակի ցանկացած բույս:

f) «Կոկայի տերև» - կոկայի թփի տերևը, բացառությամբ այն տերևը, որից հեռացվել են Էկզոնինը, կոկայինը և ցանկացած այլ էկզոնին մորֆինը:

g) «Հանձնաժողով- Խորհրդի Թմրանյութերի Հանձնաժողով»:

h) «Խորհուրդ» - Միացյալ Ազգերի Տնտեսական և Սոցիալական Խորհրուրդ:

i) «Մշակում» - օպիումի կակաչի, կոկայի թփի կամ կանաբիսի բույսի մշակում:

j) «Թմրանյութ» - Ցանկ I և II մեջ նշված ցանկացած բնական կամ սինթետիկ նյութ:

k) «Գլխավոր Ասամբլեա» - Միացյալ Ազգերի Գլխավոր Ասամբլեա:

l) «Ապօրինի շրջանառություն» - սույն Կոնվենցիայի դրույթներին հակասող թմրամիջոցների մշակում և շրջանառության մեջ դնելը:

m) «Ներմուծում» և «արտահանում» դրանց համապատասխան նշանակությամբ՝ թմրամիջոցների ֆիզիկական փոխանցում մեկ պետությունից մեկ այլ պետություն կամ նույն պետության մեջ մի տարածքից մեկ այլ տարածք:

n) «Արտադրություն» - բոլոր գործընթացները, բացառությամբ այն արտադրությունը, որով թմրամիջոցները կարող են ձեռք բերվել և ներառում է զտումը, ինչպես նաև թմրամիջոցներից այլ թմրամիջոցներ ստանալը:

o) «Բժշկական օպիում» - բժշկական օգտագործմանը պիտանի լիելու համար մշակված օպիում:

p) «Օպիում» - օպիումի կակաչի խտացված հյութը:

q) «Օպիումի կակաչ» - *Papaver somniferum L* տեսակի բույսը:

r) «Կակաչի ցողուն» - հնձելուց հետո օպիումի կակաչի բոլոր մասերը (բացառությամբ սերմերի):

s) «Պատրաստուկ» - թմրանյութ պարունակող խառնուրդ՝ պինդ կամ հեղուկ:

t) «Արտադրում» - օպիումի, կոկայի տերևների, կանաբիսի և կանաբիսի խեժի առանձնացումը այն բույսից, որից դրանք ձեռք են բերվել:

u) «Ցանկ I», «Ցանկ II», «Ցանկ III» և «Ցանկ IV» - համապատասխանաբար համարակալված թմրամիջոցները կամ պատրաստուկները, որոնք կցված են սույն Կոնվենցիային՝ համաձայն Հոդված 3 սահմանված ժամանակ առ ժամանակ փոփոխությունների:

v) «Գլխավոր Քարտուղար» - Միացյալ Ազգերի Գլխավոր Քարտուղար:

w) «Հատուկ պահուստներ» - թմրամիջոցների այն քանակը, որը պահվում է երկրում կամ այսպիսի երկրի կառավարության տարածքում կառավարության հատուկ նպատակների համար և արտակարգ հանգամանքներում օգտագործելու համար:

x) «Պահուստներ» - թմրամիջոցների այն քանակը, որպես պահվում է երկրում կամ տարածքում և նախատեսվում է՝

i) Բժշկական և գիտական նպատակներով երկրում կամ երկրի տարածքում օգտագործման համար,

ii) Երկրում կամ տարածքում դեղերի կամ այլ նյութերի արտադրության համար կամ

iii) Արտահանման համար,

բայց չի ներառում թմրամիջոցների այն քանակը, որը պահվում է երկրում կամ երկրի տարածքում՝

iv) Մանրածախ դեղագործների կամ այլ լիազորված մանրածախ վաճառողների կամ հաստատությունների կամ որակավորված անձանց մոտ՝ համապատասխանորեն թույլատրված թերապևտական կամ գիտական գործունեությունների համար կամ

v) Որպես «հատուկ պահուստներ»:

y) «Տարածք» նշանակում է պետության ցանկացած մասը, որը դիտարկվում է որպես առանձին միավոր՝ ներմուծման վկայականների կրառման և Հոդված 31 նախատեսված արտահանման լիազորությունների հնարավորություններով: Այս սահմանումը չպետք է կիրառվի «տարածք» տերմինի առումով, ինչպես օգտագործված է Հոդվածներ 42 և 46: 2. Սույն Կոնվենցիայի նպատակների համար թմրանյութը պետք է դիտարկվի, որպես «սպասված», որը մանրածախ վաճառքի, բժշկական օգտագործման կամ գիտական հետազոտության համար մատակարարվել է ցանկացած անձի կամ ձեռնարկության և «սպառումը» պետք է համապատասխանաբար մեկնաբանվի:

Հոդված 2

ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՆՅՈՒԹԵՐ

1. Բացառությամբ վերահսկման այն միջոցառումների, որոնք սահմանափակված են որոշ թմրամիջոցներով, Ցանկ I թմրամիջոցները ենթակա են վերահսկման, ինչը կիրառելի է սույն Կոնվենցիայով սահմանված թմրամիջոցների առումով և մասնավորապես այն նյութերի, որոնք նախատեսված են Հոդված 4 c), 19, 20, 21, 29, 30, 31, 32, 33, 34 և 37 կետերում:

2. Ցանկ II թմրամիջոցները ենթակա են վերահսկման նույն միջոցառումների, ինչ որ Ցանկ I թմրամիջոցները՝ բացառությամբ մանրածախ առևտրին վերաբերող Հոդված 30 պարբերություններ 2 և 5 նախատեսված միջոցառումների:

3. Պատրաստուկները, բացառությամբ Ցանկ III նախատեսված դեպքերի, ենթակա են վերահսկման նույն միջոցառումների, ինչ որ այն թմրամիջոցները, որոնք դրանք պարունակում են, բայց այսպիսի պատրաստուկների դեպքում չպետք է պահանջվեն այն գնահատականները (Հոդված 19) և վիճակագրությունը (Հոդված 20), որոնք տարբերվում են այն պատրաստուկներից, որոնք վերաբերվում են այս թմրամիջոցներին և չեն պահանջվում այսպիսի պատրաստուկների ժամանակ, և Հոդված 29 պարբերություն c) և Հոդված 30, պարբերություն 1 b) ii չեն կիրառվում:

4. Ցանկ III պատրաստուկները ենթակա են վերահսկման նույն միջոցառումներին, ինչ որ Ցանկ II-ի թմրամիջոցներ պարունակող պատրաստուկները, բացառությամբ Հոդված 31 պարբերություններ 1 *b*) և 3-ից 15-ը և ինչ վերաբերում է դրանց ձեռք բերմանը և մանրածախ վաճառքին Հոդված 34 պարբերություն *b*) չեն կիրառվում և որ գնահատականների (Հոդված 19) և վիճակագրության (Հոդված 20) նպատակով պահանջվող տեղեկատվությունը պետք է սահմանափակվի թմրամիջոցների այն քանակություններով, որոնք օգտագործվում են այսպիսի պատրաստուկների արտադրության մեջ:

5. Ցանկ IV թմրամիջոցները պետք է ներգրավվեն նաև Ցանկ I-ում և ենթարկվեն հետագա Ծրագրի թմրամիջոցների հանդեպ կիրառվող վերահսկման բոլոր միջոցառումների և ի լրումն`

a) Կողմը պետք է ձեռնարկի վերահսկման ցանկացած միջոցառումներ, որոնք, ըստ նրա, անհրաժեշտ են` հաշվի առնելով ներգրավված թմրանյութի առանձնահատուկ վտանգավոր բնորոշումները և

b) Կողմը, եթե ըստ նրա, իր երկրի գերակայող պայմանները հանրային առողջապահությանը և բարեկեցությանը ամենապատշաճ ուշադրություն են դարձնում, ապա պետք է արգելի ցանկացած այսպիսի թմրանյութի արտադրությունը, պատրաստումը, ներմուծումը կամ արտահանումը, վաճառքը, պահելը կամ օգտագործումը, բացառությամբ այն քանակների, որոնք կարող են անհրաժեշտ լինել միայն բժշկական կամ գիտական հետազոտությունների համար, ներառյալ կլինիկական փորձերը, որոնք պետք է կատարվեն Կողմի ուղղակի վերահսկման և ստուգման ներքո:

6. Ի լրումն Ցանկ I բոլոր թմրամիջոցներին կիրառվող վերահսկման միջոցառումների, օպիումը ենթակա է Հոդված 19 պարբերություն 1, ենթապարբերություն *f*) և Հոդվածներ 21, 23 և 24 դրույթների, կոկայի տերևը ենթակա է Հոդվածներ 26 և 27 դրույթների և կանաբիսը Հոդված 28 դրույթների:

7. Օպիումի կակաչը, կոկայի թուփը, կանաբիսի բույսը, կակաչի ցողունը և կանաբիսի տերևները ենթակա են այնպիսի վերահսկողական միջոցառումների, որոնք սահմանված են համապատասխանաբար Հոդված 19 պարբերություն 1 ենթապարբերություն *e*), Հոդված 20 պարբերություն 1 ենթապարբերություն *g*), Հոդված 21 և Հոդվածներ 22-ից 24, 22, 26 և 27, 22 և 28, 25 և 28.

8. Կողմերը պետք է իրենց լավագույն ջանքերը ներդնեն, որպեսզի կիրառեն վերահսկման այսպիսի միջոցառումներ այն թմրամիջոցների հանդեպ, որոնք ներառված չեն այս Կոնվենցիայում, բայց որոնք կարող են օգտագործվել թմրամիջոցների ապօրինի արտադրության համար:

9. Կողմերից չի պահանջվում սույն Կոնվենցիայի դրույթները կիրառել այն թմրամիջոցների հանդեպ, որոնք համընդհանուր կերպով օգտագործվում են բժշկական կամ գիտական նպատակներից բացի այլ արդյունաբերությունում, հաշվի առնելով որ`

a) Դրանք ապահովված են համապատասխան գործածման համար կամ այլ մեթոդներով, որ այս հանգամանքներում օգտագործված թմրամիջոցները չարաշահման չեն հանգեցնի կամ ունեն Հոդված 3 պարբերություն 3 դրույթները կամ որ բոլոր վնասակար նյութերը չեն կարող վերականգնվել և

b) Դրանք ներառված են վիճակագրական տեղեկատվության մեջ (Հոդված 20)` այս կերպով օգտագործված յուրաքանչյուր թմրամիջոցների քանակով:

ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Երբ Կողմը կամ Առողջապահության Համաշխարհային Կազմակերպությունը տեղեկություն ունեն, որն ըստ վերջինիս կարող է պահանջել փոփոխություններ մտցնել Ծրագրերից ցանկացածում, ապա դրա մասին պետք է տեղյակ պահի Գլխավոր Քարտուղարին և տրամադրի նրան այս քայլը հիմնավորող համապատասխան տեղեկատվությունը:

2. Գլխավոր Քարտուղարը պետք է այսպիսի կամ նմանատիպ այլ հայտարարությունը, որն ըստ նրա գործին առնչվում է, փոխանցի Կողմերին, Հանձնաժողովին, ինչպես նաև Առողջապահության Համաշխարհային Կազմակերպությանը, Կողմի իրազեկումից հետո:

3. Երբ այսպիսի հայտարարությունը վերաբերում է Ցանկ I կամ Ցանկ II դեռ չնշված նյութերին, ապա`

i) Հասու տեղեկատվության լույսի ներքո Կողմերը պետք քննեն Ցանկ I թմրամիջոցների վերահսկման միջոցառումների պայմանական կիրառման հնարավորությունը:

ii) Կախված սույն պարբերության iii) ենթապարբերության որոշումից` Հանձնաժողովը կարող է որոշել, որ Կողմերը այս թմրանյութի հանդեպ պայմանականորեն կիրառում են Ցանկ I թմրամիջոցների վերահսկման միջոցառումները: Կողմերը քննարկվող թմրանյութի հանդեպ այսպիսի միջոցառումները պետք է պայմանականորեն կիրառեն:

iii) Եթե Առողջապահության Համաշխարհային Կազմակերպությունը գտնում է, որ թմրանյութը նմանատիպ չարաշահման կամ Ցանկ I կամ Ցանկ II թմրամիջոցների վատ հետևանքների հիմք կարող է հանդիսանալ կամ կարող է փոխակերպվել թմրանյութի, ապա այն պետք է Հանձնաժողովին ներկայացնի այդ բացահայտումները, որը, համաձայն Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության առաջարկության, կարող է որոշել, այդ թմրանյութի` Ցանկ I կամ Ցանկ II ավելացնելու հարցը:

4. Եթե Առողջապահության Համաշխարհային Կազմակերպությունը գտնում է, որ պատրաստուկը, իր մեջ պարունակող նյութերով չի կարող չարաշահման առարկա հանդիսանալ կամ չի կարող վատ ազդեցություն թողնել (պարբերություն 3), և որ այս թմրանյութը չի կարող վերականգնվել, ապա Հանձնաժողովը կարող է, համաձայն Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության առաջարկությունների, ավելացնել այս պատրաստուկը Ցանկ III:

5. Եթե Առողջապահության Համաշխարհային Կազմակերպությունը գտնում է, որ Ցանկ I թմրամիջոցները կարող են չարաշահման առարկա հանդիսանալ կամ վատ ազդեցություն թողնել (պարբերություն 3) և որ այսպիսի պատասխանատվությունը չի հաշվանցվում Ցանկ IV թմրամիջոցներից բացի թմրամիջոցների էական թերապևտիկ առավելություններով, ապա Հանձնաժողովը կարող է, համաձայն Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության առաջարկության, որոշել այդ թմրանյութի` Ցանկ IV ավելացնելու հարցը:

6. Երբ հայտարարությունը վերաբերում է արդեն Ցանկ I կամ Ցանկ II տեղ գտած թմրամիջոցներին կամ Ցանկ III պատրաստուկին, ապա Հանձնաժողովը, բացի

պարբերություն 5 դրույթների, կարող է, համաձայն Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության առաջարկության, փոփոխություններ մտցնել ցանկացած Ծրագրում`

a) Ցանկ I-ից թմրանյութը փոխանցել Ցանկ II կամ Ցանկ II-ից Ցանկ I կամ

b) Ըստ անհրաժեշտության, Ծրագրից հանել թմրանյութ կամ պատրաստուկ:

7. Հանձնաժողովի ցանկացած որոշում, ընդունված համաձայն սույն Հոդվածի, պետք է Գլխավոր Քարտուղարի միջոցով հաղորդվի Միացյալ Ազգերի բոլոր անդամ երկրներին, սույն Կոնվենցիայի ոչ անդամ երկրներին, Առողջապահության Համաշխարհային Կազմակերպությանը և Տնօրենների Խորհրդին: Այսպիսի որոշումը պետք է ուժի մեջ մտնի Կողմի կողմից այսպիսի հաղորդագրություն ստանալու օրվանից և Կողմերը պետք է սույն Կոնվենցիայով նախատեսված համապատասխան գործողություններ ծավալեն:

8. a) Ծրագրերը փոփոխող Հանձնաժողովի ցանկացած որոշում ենթակա կլինի վերանայման Տնօրենների Խորհրդի կողմից որևէ Կողմի խնդրանքով` որոշման մասին գրություն ստանալուց իննսուն օրվա ընթացքում: Վերանայման խնդրանքը կուղարկվի Գլխավոր Քարտուղարին համապատասխան ամբողջ տեղեկատվության հետ, որի վրա է հիմնված վերանայման խնդրանքը:

b) Գլխավոր Քարտուղարը պետք է ուղարկի վերանայման խնդրանքի պատճենները և համապատասխան այլ տեղեկատվությունը Հանձնաժողովին, Առողջապահության Համաշխարհային Կազմակերպությանը և բոլոր Կողմերին` հրավիրելով նրանց մեկբանություններ ներկայացնել իննսուն օրվա ընթացքում: Ստացված բոլոր մեկնաբանությունները պետք է ներկայացվեն Խորհրդի քննարկմանը:

c) Խորհուրդը կարող է հաստատել, փոխել կամ մերժել Հանձնաժողովի որոշումը, և Խորհրդի որոշումը պետք է լինի վերջնական: Խորհրդի որոշմուն գրությունը պետք է ուղարկվի ՄԱԿ-ի անդամ բոլոր պետություններին, այս Կոնվենցիայի ոչ-անդամ Կողմերին, Հանձնաժողովին, Առողջապահության Համաշխարհային Կազմակերպությանը և Տնօրեններին Խորհրդին:

d) Ուսումնասիրության ընթացքում Հանձնաժողովի սկզբնական որոշումը պետք է ուժի մեջ մնա:

9. Համաձայն սույն Հոդվածի` Հանձնաժողովի կայացրած որոշումները չպետք է ենթարկվեն Հոդված 7 նախատեսված վերանայման ընթացակարգերին:

Հոդված 4

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կողմերը պետք է ձեռնարկեն այնպիսի օրենսդրական և վարչական միջոցառումներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել`

a) Իրենց սեփական տարածքներում սույն Կոնվենցիայի դրույթների արդյունավետ դարձման և իրականացման համար:

b) Ի կատարումն սույն Կոնվենցիայի դրույթների այլ Պետությունների հետ համագործակցելու համար և

- c) Ըստ սույն Կոնվենցիայի դրույթների՝ թմրամիջոցների պատրաստումը, արտադրությունը, արտահանումը, ներմուծումը, բաշխումը, վաճառքը, օգտագործումը և պահումը բացառապես բժշկական և գիտական նպատակներով սահմանափակելու համար:

Հոդված 5

ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Կոմերը, ընդունելով թմրադեղերի միջազգային վերահսկման բնագավառում Միացյալ Ազգերի դերը, համաձայնվում են վստահել Տնտեսական և Սոցիալական Խորհրդի Թմրանյութերի Հանձնաժողովին և Թմրանյութերի Վերահսկման Միջազգային Խորհրդին՝ իրականացնել սույն Կոնվենցիայով նախատեսված գործառույթները:

Հոդված 6

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԸ

Միացյալ Ազգերի Կազմակերպությունը հոգում է Հանձնաժողովի և Տնօրենների Խորհրդի ծախսերը՝ Գլխավոր Ասամբլեայի կողմից սահմանված կարգով: Կողմերը, որոնք Միացյալ Ազգերի անդամ չեն հանդիսանում, պետք է իրենց ներդրումն ունենան այս ծախսերում այնքանակով, որքանով Գլխավոր Ասամբլեան հավասար է գտնում և տեղին համարում՝ ժամանակ առ ժամանակ այս Կողմերի Կառավարությունների հետ խորհրդակցելուց հետո:

Հոդված 7

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ և ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ

Բացառությամբ Հոդված 3 նախատեսված որոշումների՝ Հանձնաժողովի կողմից ընդունված յուրաքանչյուր որոշում, համաձայն սույն Կոնվենցիայի դրույթների, պետք է հաստատվի կամ ձևափոխվի Խորհրդի կամ Գլխավոր Ասամբլեայի կողմից նույն կերպով, ինչ որ Հանձնաժողովի այլ որոշումները և առաջարկությունները:

Հոդված 8

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ

Հանձնաժողովը լիազորված է քննության առնել բոլոր այն հարցերը, որոնք հետևում են սույն Կոնվենցիայի նպատակներին և մասնավորապես՝

- a) Փոփոխություններ մտցնել Ծրագրերի մեջ՝ համաձայն Հոդված 3,
- b) Տնօրենների Խորհրդի ուշադրությունը հրավիրել ցանկացած հարցի վրա, որը կարող է վերաբերել Տնօրենների Խորհրդի ֆունկցիաներին:
- c) Առաջարկություններ ներկայացնել սույն Կոնվենցիայի նպատակների և դրույթների իրականացման համար, ներառյալ գիտական հետազոտությունների ծրագրերը և գիտական կամ տեխնիկական բնույթի տեղեկատվության փոխանակումը և

d) Ոչ-Կողմերի ուշադրությունը հրավիրել այն որոշումների և առաջարկությունների վրա, որոնք նա ընդունում է, համաձայն սույն Կոնվենցիայի՝ իրեց հայեցողությամբ գործողություններ ձեռնարկելու հեռանկարով:

Հոդված 9

ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ և ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ

1. Տնօրենների Խորհուրդը կազմված է տասներեք անդամներից, որոնք ընտրվում են Խորհրդի կողմից հետևյալ կերպ՝
 - a) Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության կողմից ներկայացված առնվազն հինգ հոգանոց ցուցակից երեք անդամ՝ բժշկական, դեղագործական և ֆարմակոլոգիական փորձով և
 - b) Տաս անդամ Միացյալ Ազգերի Անդամներ հանդիսացող և Միացյալ Ազգերի Անդամ չհանդիսացող Կողմերի առաջարկված անձանց ցուցակից:
2. Տնօրենների Խորհրդի անդամները պետք է լինեն այն անձինք, որոնք իրենց փորձառությամբ, անկողմնապահությամբ և անշահագրգռվածությամբ ընդհանուր վստահություն կունենան: Իրենց պաշտոնավարության ընթացքում նրանք չպետք է այլ աշխատանք ունենան կամ ներգրավված լինեն այլ գործունեության մեջ, որը կարող է խոչընդոտել վերջիններիս իրենց ֆունկցիաները կատարելիս չեզոք լինելուն: Խորհրդակցելով Տնօրենների Խորհրդի հետ՝ Խորհուրդը պետք է ձեռնարկի բոլոր միջոցները, որպեսզի ապահովի Տնօրենների Խորհրդի լիակատար տեխնիկական անկախությունը սեփական ֆունկցիաները իրականացնելիս:
3. Խորհուրդը, առաջնորդված համահավասար աշխարհագրական ներկայացուցչական սկզբունքով, պետք է հաշվի առնի Տնօրենների Խորհրդում հավասար համամասնությամբ այն անձանց ներգրավելու կարևորությունը, որոնք համապատասխան գիտելիքներ ունեն թմրամիջոցների արտադրության, արտադրման և սպառման երկրների մասին և կապ ունեն են այսպիսի երկրների հետ:
4. Համագործակցելով Կառավարությունների հետ և ենթակա սույն Կոնվենցիայի պայմանների՝ Տնօրենների Խորհուրդը պետք է փորձի սահմանափակել թմրամիջոցների մշակումը, արտադրությունը, պատրաստումը և օգտագործումը այն քանակներով, որոնք անհրաժեշտ են բժշկական և գիտական նպատակների համար, որպեսզի ապահովի դրանց մատչելիությունը այսպիսի նպատակների համար և կանխարգելի թմրամիջոցների անօրինական մշակումը, արտադրությունը, պատրաստում և ապօրինի շրջանառությունն ու օգտագործումը:
5. Համաձայն սույն Կոնվենցիայի՝ Տնօրենների Խորհրդի կողմից պետք է ձեռնարկվեն բոլոր միջոցառումները, որոնք հետևողական են Տնօրենների Խորհրդի հետ Կառավարությունների հետագա համագործակցության նպատակներին և տրամադրվեն Կառավարությունների և Տնօրենների Խորհրդի միջև շարունակական երկխոսության այն մեխանիզմները, որոնք կաջակցեն և կօժանդակեն սույն Կոնվենցիայի նպատակներին արդյունավետ հասնելու ազգային ջանքերին:

Հոդված 10

ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ և ԿԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Տնօրենների խորհրդի անդամները պաշտոնավարում են հինգ տարի և կարող են վերընտրվել:
2. Տնօրենների խորհրդի անդամի պաշտոնավարման ժամանակահատվածը ավարտվում է Տնօրենների խորհրդի առաջին ժողովի նախօրեին և նրա հաջորդը այս ժողովին մասնակցելու իրավունք ունի:
3. Եթե Տնօրենների խորհրդի անդամը չի հաճախում երեք անընդմեջ նստաշրջան, ապա սա կդիտվի, որպես հրաժարական:
4. Տնօրենների խորհրդի առաջարկությամբ՝ խորհուրդը կարող է ազատել Տնօրենների խորհրդի այն անդամին, որը դադարել է կատարել Հոդված 9 պարբերություն 2-ով նախատեսված պայմանները: Այսպիսի առաջարկությունները պետք է ընդունվեն Տնօրենների խորհրդի իննը անդամների կողմ քվեով:
5. Երբ Տնօրենների խորհրդի անդամը պաշտոնավարության ժամկետի կեսից թափուր է թողնում այդ տեղը, ապա խորհուրդը, համաձայն Հոդված 9 դրույթների, հնարավորինս շուտ լրացնում է այսպիսի թափուր տեղը՝ մեկ այլ անդամ ընտրելով պաշտոնավարության մնացյալ ժամանակահատվածի համար:
6. Տնօրենների խորհրդի անդամները Գլխավոր Ասամբլեայի կողմից սահմանված համապատասխան վարձատրություն են ստանում:

Հոդված 11

ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1. Տնօրենների խորհուրդը ընտրում է իր Նախագահին և ըստ անհրաժեշտության այլ պաշտոնյաների և ընդունում է իր կանոններն ու ընթացակարգը:
2. Տնօրենների խորհուրդը հանդիպում է այն հաճախանակությամ, որն ըստ վերջինիս, անհրաժեշտ է սեփական ֆունկցիաները պատշաճ կատարելու համար, բայց յուրաքանչյուր օրացույցային տարի պետք է առնվազն երկու նստաշրջան գումարի:
3. Առնվազն ութ անդամ է պետք Տնօրենների խորհրդի ժողովներում անհրաժեշտ քվորումն ապահովելու համար:

Հոդված 12

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՐԶԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Տնօրենների խորհուրդը սահմանում է այն ամսաթիվը կամ ամսաթվերը և ձևերը, որոնցով պետք է տրամադրվեն Հոդված 19 սահմանված գնահատականները և սահմանում է այդ ձևերը:
2. Այն երկրների և տարածքների առումով, որտեղ սույն Կոնվենցիան չի կիրառվում Տնօրենների խորհուրդը պետք է համապատասխան Կառավարություններին խնդրի տրամադրել սույն Կոնվենցիայի դրույթներով նախատեսված գնահատականներ:
3. Եթե ինչ-որ պետություն սահմանված ժամկետում չի տրամադրում գնահատականներ իր տարածքների մասին, ապա Տնօրենների խորհուրդը պետք է իր հնարավորության սահմաններում ինքը կազմի այդ գնահատականները: Այսպիսի գնահատականներ կազմելիս՝ Տնօրենների խորհուրդը պետք է հնարավորինս համագործակցի տվյալ Կառավարության հետ:

4. Տնօրենների խորհուրդը պետք է քննի գնահատականները՝ ներառելով լրացուցիչ հաշվարկներ և բացառությամբ հատուկ նպատակների պահանջների դեպքերում, կարող է նմանատիպ տեղեկություն պահանջել, եթե համարի, որ դա անհրաժեշտ է այն երկրի կամ տարածքի համար, որի կողմից այդ գնահատականները կատարվում են, որպեսզի ավարտի գնահատականը կամ բացատրի դրանում պարունակվող ցանկացած հայտարարություն:

5. Բժշկական և գիտական նպատակների համար պահանջվող պատշաճ քանակներով թմրամիջոցների սահմանափակմամբ և այսպիսի նպատակներով դրանց մատչելիության ապահովմամբ Տնօրենների խորհուրդը պետք է հնարավորինս արագ հաստատի գնահատականները, ներառյալ լրացուցիչ գնահատականները կամ տվյալ Կառավարության թույլատվությամբ կարող է փոփոխել այս գնահատականները: Կառավարության և Տնօրենների խորհուրդի միջև անհամաձայնության պարագայում վերջինս պետք է իրավունք ունենա իրականացնել, հաղորդել և հրապարակել սեփական գնահատականները՝ ներառյալ լրացուցիչ գնահատականները:

6. Ի լրումն Հոդված 15 նշված հաշվետվությունների՝ Տնօրենների խորհուրդը այս դեպքերում պետք է, սակայն առնվազն տարին մեկ անգամ, որոշի հրապարակել այնպիսի տեղեկատվությունը, որը վերաբերում է այս գնահատականներին, քանի որ դրա կարծիքը նպաստում է սույն Կոնվենցիայի իրականացմանը:

Հոդված 13

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Տնօրենների խորհուրդը պետք է որոշի Հոդված 20 նախատեսված վիճակագրական արդյունքների տրամադրման ձևն ու կերպը:

2. Տնօրենների խորհուրդը պետք է քննի արդյունքները, որոշելու, թե արդյոք Կողմը կամ ցանկացած այլ Պետություն համապատասխանել է սույն Կոնվենցիայի դրույթներին:

3. Տնօրենների խորհուրդը կարող է այս տեսակ տեղեկատվություն պահանջել, եթե այն գտնում է, որ դա անհրաժեշտ է այսպիսի վիճակագրական արդյունքների լրացման կամ բացատրման համար:

4. Հատուկ նպատակների համար պահանջվող թմրամիջոցների վիճակագրական տեղեկատվության մասին կարծիք հայտնելը՝ Տնօրենների խորհրդի իրավասությունների շրջանակում չէ:

Հոդված 14

ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

1. a) Եթե սույն Կոնվենցիայի դրույթներով նախատեսված Կառավարությունների կողմից Տնօրենների խորհրդին ներկայացված տեղեկատվության քննության կամ Միացյալ Ազգերի մարմինների կամ այլ մասնագիտացված գործակալությունների կողմից հաղորդված տեղեկության հիման վրա կամ հաշվի առնելով, որ դրանք հաստատվել են Տնօրենների խորհրդի առաջարկությամբ Հանձնաժողովի կամ այլ միջկառավարական կամ միջազգային հասարակական կազմակերպությունների կողմից, որոնք

անմիջական փորձագիտություն ունեն նշված առարկայի բնագավառում և, որոնք Միացյալ Ազգերի Կանոնադրության Հոդված 71-ով Տնտեսական և Սոցիալական Խորհրդի խորհրդատվական կարգավիճակ ունեն կամ որոնք Խորհրդի հետ հատուկ համաձայնությամբ նմանատիպ կարգավիճակ ունեն, Տնօրենների Խորհուրդը հիմնարար պատճառներ ունի հավատալու, որ սույն Կոնվենցիայի նպատակները լրջորեն վտանգվել են ցանկացած Կողմի, երկրի կամ տարածքի սույն Կոնվենցիայի դրույթների իրականացման անհաջողության պատճառով, ապա Տնօրենների Խորհուրդը պետք է իրավունք ունենա համապատասխան կառավարությանն առաջարկել խորհրդատվություններ սկսել կամ բացատրություններ ներկայացնել: Եթե սույն Կոնվենցիայի դրույթների իրականացման անհաջողության մատնված Կողմը կամ երկիրը կամ տարածքը դարձել է, կամ լուրջ ռիսկի վտանգ կա, որ կդառնա, թմրամիջոցների անօրինական մշակման, արտադրության կամ արտադրման կամ ապօրինի շրջանառության կամ սպառման գոտի, ապա Տնօրենների Խորհուրդը իրավունք ունի համապատասխան Կառավարությանն առաջարկել խորհրդատվություններ սկսել: Տնօրենների Խորհուրդը իրավունք ունի Կողմերի, Խորհրդի և Հանձնաժողովի ուշադրությունը գրավել այն հարցեր վրա, որոնք վերաբերում են ստորև բերված ենթապարբերություն *ժ*-ին: Տնօրենների Խորհուրդը պետք է հնարավորինս գաղտնի պահի Կառավարության տեղեկատվության կամ բացատրության խորհրդատվությունների հարցումը և սույն ենթապարբերությամբ նախատեսված խորհրդատվությունները:

b) Վերը նշված ենթապարբերություն *ա*-ով նախատեսված գործողությունները ձեռնարկելուց հետո Տնօրենների Խորհուրդը, եթե անհրաժեշտ է այդպես վարվել, կարող է համապատասխան կառավարությանը կոչ անել ընդունել այսպիսի ուղղիչ միջոցառումներ, որոնք ըստ հանգամաքների, անհրաժեշտ կլինեն սույն Կոնվենցիայի դրույթներն իրականացնելու համար:

c) Գործողությունների անհրաժեշտության պարագայում Տնօրենների Խորհուրդը կարող է, սույն պարբերության ենթապարբերություն *ա*-ով նախատեսված հարցի գնահատման նպատակով, համապատասխան Կառավարությանն առաջարկել, որպեսզի իր տարածքում իրականացնի տվյալ հարցի ուսումնասիրությունը, այն միջոցներով, որոնք Կառավարությունը տեղին կգտնի: Եթե համապատասխան Կառավարությունը որոշում է իրականացնել այս ուսումնասիրությունը, ապա այն կարող է խնդրել Տնօրենների Խորհրդին տրամադրել փորձագիտություն և համապատասխան ունակություններն ունեցող մեկ կամ ավել անձանց, առաջարկվող ուսումնասիրությունում Կառավարության պաշտոնյաներին աջակցելու համար: Տնօրենների Խորհրդի կողմից տրամադրվող անձինք պետք է ստանան Կառավարության համաձայնությունը: Այս ուսումնասիրության կատարման ձևերը և ժամանակահատվածը պետք է որոշվեն Կառավարության և Տնօրենների Խորհրդի միջև խորհրդատվության արդյունքում: Կառավարությունը պետք է Տնօրենների Խորհրդին փոխանցի ուսումնասիրության արդյունքները և մատնանշի իր կողմից ձեռնարկվելիք անհրաժեշտ ուղղիչ միջոցառումները:

d) Եթե Տնօրենների Խորհուրդը գտնում է, որ համապատասխան Կառավարությունը չի կարողացել բավարար բացատրություններ տալ վերը

նշված ենթապարբերություն *ա*)-ի դեպքում կամ չի կարողացել վերը նշված ենթապարբերություն *բ*)-ով նախատեսված ուղղիչ միջոցառումները ձեռնարկել կամ որ իրավիճակը ուղղելու համար միջազգային համագործակցության լուրջ անհրաժեշտության գույություն ունի, ապա այն կարող է հրավիրել Կողմերի, Խորհրդի և Հանձնաժողովի ուշադրությունը այս խնդրի վրա: Տնօրենների Խորհուրդը պետք է այսպես գործի, եթե սույն Կոնվենցիայի նպատակները լրջորեն վտանգված են և հնարավոր չի եղել այլ կերպով այս խնդրին տալ բավարար լուծում: Այն նույն կերպ պետք է գործի նաև, եթե գտնում է, որ իրավիճակը ուղղելու համար միջազգային համագործակցության լուրջ անհրաժեշտություն գույություն ունի՝ Կողմերի, Խորհրդի և Հանձնաժողովի ուշադրությունը հրավիրելով այսպիսի համագործակցության ամենաարդյունավետ մեթոդի խթանման վրա: Տնօրենների Խորհրդի և, եթե այս հարցի առումով առկա է, նաև Հանձնաժողովի հաշվետվությունները հաշվի առնելուց հետո Խորհուրդը կարող է հրավիրել նաև Գլխավոր Ասամբլեայի ուշադրությունը այս հարցի վրա:

2. Համաձայն վերը նշված պարբերության 1 *ժ*)-ի՝ հրավիրելով Կողմերի, Խորհրդի և Հանձնաժողովի ուշադրությունը այս հարցին Տնօրենների Խորհուրդը կարող է, եթե այն բավարարված է, որ այսպիսի գործընթացը անհրաժեշտ է, առաջարկել Կողմերին տվյալ երկրներից և տարածքներից դադարել թմրամիջոցների ներմուծումը, արտահանումը կամ երկուսն էլ, կամ սահմանված ժամանակահատվածում կամ մինչև որ Տնօրենների Խորհուրդը բավարարվի տվյալ երկրի կամ տարածքի իրավիճակով: Տվյալ Պետությունը կարող է հարցը ներկայացնել Խորհրդում:
3. Տնօրենների Խորհուրդը պետք է իրավունք ունենա հաշվետվություն հրապարակել սույն Հոդվածի դրույթներով նախատեսված հարցի մասին և այն փոխանցել Խորհրդին, որը պետք է այն փոխանցի բոլոր Կողմերին: Եթե Տնօրենների Խորհուրդը որոշում է հրապարակել այս հաշվետվությունը, ապա այն պետք է հրապարակի նաև դրան վերաբերող Կառավարության տեսակետները, եթե վերջինս դա խնդրել է:
4. Եթե Տնօրենների Խորհրդի սույն Հոդվածով նախատեսված հաշվետվության հրապարակման որոշումը չի անցնում միաձայն, ապա հրապարակվում է փոքրամասնության կարծիքը:
5. Տնօրենների Խորհրդի ժողովներին, երբ համաձայն սույն Հոդվածի քննարկվում են Պետության անմիջական շահերին վերաբերող հարցեր, կարող են հրավիրվել այդ Պետության ներկայացուցիչները:
6. Սույն Հոդվածով նախատեսված Տնօրենների Խորհրդի որոշումները պետք է ընդունվեն Տնօրենների Խորհրդի բոլոր անդամների երկու երրորդի մեծամասնությամբ:

Հոդված 14 bis

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ և ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ըստ Տնօրենների Խորհրդի համապատասխան դեպքերի և ի լրումն, կամ որպես Հոդված 14 պարբերություններ 1 և 2 սահմանված այլընտրանքային միջոցառումների, Տնօրենների Խորհուրդը, համապատասխան Կառավարության համաձայնությանմբ, կարող է Միացյալ Ազգերի համապատասխան մարմիններին և մասնագիտացված գործակալություններին առաջարկել, որպեսզի տեխնիկական կամ ֆինանսական աջակցություն կամ երկուսն էլ տրամադրվեն Կառավարությանը, որպեսզի վերջինս

իրականացնի սույն Կոնվենցիայով նախատեսված իր պարտավորությունները՝ ներառյալ Հոդվածներ 2, 35, 38 և 38 *bis* նախատեսված կամ հղված պարտավորությունները:

Հոդված 15

ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Տնօրենների Խորհուրդը պետք է իր աշխատանքի մասին տարեկան հաշվետվություններ և այսպիսի լրացուցիչ հաշվետվություններ պատրաստի, որոնք պետք է պարունակեն իր տրամադրության տակ գտնվող գնահատականների և վիճակագրական տվյալների վերլուծությունը և համապատասխան դեպքերում այն բացատրությունները, որոնք, եթե այդպիսիք կան, տրվել կամ պահանջվել են Կառավարությունների կողմից՝ ցանկացած այլ դիտարկումների և առաջարկությունների հետ և որոնք Տնօրենների Խորհուրդը կցանկանա անել: Այս հաշվետվությունները Հանձնաժողովի կողմից պետք է ներկայացվեն Խորհրդին, որը կարող է ըստ պատշաճի այսպիսի առաջարկություններ անել:

2. Հաշվետվությունները պետք է փոխանցվեն Կողմերին և հետագայում հրապարակվեն Գլխավոր Քարտուղարի կողմից: Կողմերը պետք է թույլատրեն դրա անարգել սփռումը:

Հոդված 16

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ

Հանձնաժողովի և Տնօրենների Խորհրդի քարտուղարական ծառայությունները պետք է տրամադրվեն Գլխավոր Քարտուղարի կողմից: Մասնավորապես, Տնօրենների Խորհրդի Քարտուղարությունը պետք է նշանակվի Գլխավոր Քարտուղարի կողմից՝ Տնօրենների Խորհրդի հետ խորհրդակցությամբ:

Հոդված 17

ՀԱՏՈՒԿ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սույն Կոնվենցիայի դրույթների կիրառման նպատակով Կողմերը պետք է հատուկ վարչարարություն պահեն:

Հոդված 18

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻՆ ՏՐԱՄԱՐՎՈՂ ԿՈՂՄԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

1. Կողմերը պետք է Գլխավոր Քարտուղարին տրամադրեն այն տեղեկատվությունը, որը կարող է խնդրել Հանձնաժողովը և որը կարող է անհրաժեշտ լինել դրա ֆունկցիաները իրականացնելու համար և մասնավորապես՝

- a) իրենց տարածքներում Կոնվենցիայի գործելու մասին տարեկան հաշվետվություն,
- b) բոլոր այն օրենքների և կանոնակարգերի տեքստերը, որոնք հրապարակվում են սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտցնելու համար,
- c) այնպիսի տեղեկությունները, որոնք ըստ Հանձնաժողովի որոշման կվերաբերեն անօրինական շրջանառությանը, ներառյալ անօրինական շրջանառության բացահայտված յուրաքանչյուր դեպքի մանրամասները,

որոնք կարող են կարևոր լինել անօրինական շրջանառության համար ձեռք բերված թմրամիջոցների վրա լույս սփռելու կամ անօրինական շրջանառությամբ զբաղվողների կողմից օգտագործվող մեթոդների կամ քանակությունների պատճառով և

d) Կառավարական այն գերատեսչությունների անվանումներն ու հասցեները, որոնք արտահանման և ներմուծման թույլտվություններ և վկայականներ տալու լիազորություններ ունեն:

2. Կողմերը պետք է նախորդ պարբերությունում նշված տեղեկատվությունը տրամադրեն Հանձնաժողովի կողմից խնդրված կերպով և ամսաթվերով և ձևերով:

Հոդված 19

ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԱՀԱՆՁՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԸ

1. Ամեն տարի Կողմերն իրենց յուրաքանչյուր տարածքի համար Տնօրենների Խորհրդին պետք է ներկայացնեն, Տնօրենների Խորհրդի կողմից սահմանված կերպով և ձևով, հետևյալ հարցերի մասին գնահատականներ`

a) Բժշկական և գիտական նպատակներով սպառվող թմրամիջոցների քանակը,

b) Այլ թմրամիջոցների, Ցանկ III պարտորաստուկների և սույն Կոնվենցիայի մեջ չմտնող թմրամիջոցների արտադրման համար օգտագործվող թմրամիջոցների քանակությունը,

c) Այն թմրամիջոցների պահուստները, որոնք պետք է պահվեն մինչև գնահատման տարվա դեկտեմբերի 31,

d) Հատուկ պահուստների ավելացման համար անհրաժեշտ թմրամիջոցների քանակները,

e) Այն հողատարածքի չափը (հեկտարներով) և աշխարհագրական վայրը, որն օգտագործվում է օպիումի կակաչի մշակման համար,

f) Արտադրվելիք օպիումի մոտավոր քանակը,

g) Սինթետիկ թմրամիջոցներ արտադրող արդյունաբերական ձեռնարկությունների քանակը և

h) Նախորդ պարբերությունում նշված յուրաքանչյուր ձեռնարկության կողմից արտադրվող սինթետիկ թմրամիջոցների քանակությունը:

2. a) Հոդված 21 պարբերություն 3 նշված կրճատումներին ենթակա յուրաքանչյուր տարածքի և յուրաքանչյուր թմրանյութի ընդհանուր գնահատականները, բացառությամբ օպիումի և սինթետիկ թմրանյութի, պետք է կազմեն այն քանակությունը, որը սահմանված է սույն Հոդվածի պարբերություն 1 ենթապարբերություններ a), b) և d)-ով` ավելացված ցանկացած քանակություն, որով պահանջվում է նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ փաստացի պահուստների մակարդակը հասցնել գնահատված մակարդակի, ինչպես սահմանված է պարբերություն 1 ենթապարբերություն (c)-ում,

b) Ներմուծմանը վերաբերող Հոդված 21 պարբերություն 3 և Հոդված 21 bis պարբերություն 2 նշված կրճատումներին ենթակա յուրաքանչյուր տարածքի օպիումի ընդհանուր գնահատականները պետք է կազմեն կամ սույն Հոդվածի պարբերություն 1 ենթապարբերություններ (a), (b) և (d) նախատեսված չափերը, ավելացված ցանկացած քանակություն, որով

պահանջվում է նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ փաստացի պահուստների մակարդակը հասցնել գնահատված մակարդակի, ինչպես սահմանված է պարբերություն 1 ենթապարբերություն (c)-ով կամ սույն Հոդվածի պարբերություն 1 ենթապարբերություն *բ*) սահմանված չափերը, որը որ բարձր է:

c) Հոդված 21 պարբերություն 3 նշված կրճատումներին ենթակա յուրաքանչյուր տարածքի յուրաչանջյուր սինթետիկ թմրանյութի քանակը պետք է կազմված լինի կամ սույն Հոդվածի պարբերություն 1 ենթապարբերություններ (a), (b) և (d) նախատեսված չափերից, ավելացված ցանկացած քանակություն, որով պահանջվում է նախորդող տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ փաստացի պահուստների մակարդակը հասցնել գնահատված մակարդակի, ինչպես սահմանված է պարբերություն 1 ենթապարբերություն (c)-ով կամ սույն Հոդվածի պարբերություն 1 ենթապարբերություն *հ*) սահմանված չափերից, որը որ բարձր է:

d) Սույն պարբերության նախորդ ենթապարբերություններով տրամադրվող գնահատականները պետք է պատշաճորեն փոփոխվեն, որպեսզի հաշվի առնեն ցանկացած քանակի առգրավումները և հետևաբար օրինական շրջանառության մեջ դրված, ինչպես նաև ցանկացած այլ քանակություն, որը վերցված է հատուկ պահուստներից քաղաքացիական բնակչության պահանջների համար:

3. Տարվա ընթացքում ցանկացած Պետություն կարող է տրամադրել լրացուցիչ գնահատականներ՝ այսպիսի գնահատականների անհրաժեշտության հանգամանքների բացատրությամբ:

4. Կողմերը պետք է տեղեկացնեն Տնօրենների Խորհրդին այն մեթոդների մասին, որոնք օգտագործվում են գնահատականներում ցույց տրված քանակությունները որոշելու և ներկայացված մեթոդում ցանկացած փոփոխություններ մտցնելու համար:

5. Հոդված 21 պարբերություն 3 նշված կրճատումներին ենթակա և հաշվի առնելով Հոդված 21 *bis* դրույթների անհրաժեշտությունը՝ գնահատականները չպետք է գերազանցվեն:

Հոդված 20

ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1. Կողմերը իրենց յուրաքանչյուր տարածքների համար Տնօրենների Խորհրդի կողմից սահմանված կերպով և ձևով պետք է Տնօրենների Խորհրդին ներկայացնեն վիճակագրական արդյունքներ հետևյալ հարցերի մասին՝

a) Թմրանյութերի արտադրություն կամ պատրաստում,

b) Այլ թմրամիջոցների, Ցանկ III սահմանված պատրաստուկների և սույն Կոնվենցիայում չընդգրկված նյութերի արտադրության համար օգտագործվող թմրամիջոցները և թմրամիջոցների արտադրության համար օտագործվող կակաչի ցողունը,

c) Թմրանյութերի սպառումը,

d) Թմրանյութերի և կակաչի ցողունի ներմուծումները և արտահանումները,

e) Թմրանյութերի առգրավումը և դրա վերացումը,

f) Այն թմրամիջոցների պահուստները այն տարվա դեկտեմբերի 31 դրությամբ, որին վերաբերում են արդյունքները և

- g) Օպիուժի մշակման գոտիները:
2. a) Բացառությամբ ենթապարբերություն *d)* պարբերություն 1 նշված խնդիրներին վերաբերող վիճակագրական արդյունքները պետք է նախապատրաստվեն ամեն տարի և պետք է տրամադրվեն Տնօրենների Խորհրդին ոչ ուշ, քան դրան հաջորդող տարվա հունիսի 30-ը:
 - b) Պարբերություն 1 ենթապարբերություն *d)* վերաբերող վիճակագրական արդյունքները պետք է նապատրաստվեն եռամսյակային կտրվածքով և պետք է տրամադրվեն Տնօրենների Խորհրդին այդ եռամսյակի ավարտից մեկ ամսվա ընթացքում:
 3. Կողմերից չի պահանջվում վիճակագրական տվյալներ տրամադրել հատուկ պահուստների հաշվով, բայց նրանք պետք է ներկայացնեն առանձին տվյալներ երկիր ներմուծված կամ երկրում կամ տարածքում հատուկ նպատակների համար գնված, ինչպես նաև քաղաքացիական բնակչության պահանջները բավարարելու համար հատուկ պահեստներից հանված թմրամիջոցների քանակի մասին:

Հոդված 21

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ և ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓՈՎԿՈՒՄԸ

1. Ցանկացած երկրի կողմից արտադրված և ներմուծված յուրաքանչյուր թմրանյութի ընդհանուր քանակները չպետք է գերազանցեն հետևյալի հանրագումարը՝
 - a) Գնահատման համապատասխան սահմանափակ շրջանակներում բժշկական և գիտական նպատակների համար սպառված քանակությունը,
 - b) Գնահատման համապատասխան սահմանափակ շրջանակներում այլ թմրամիջոցների, կամ Ցանկ III-ում սահմանված պատրաստուկների և սույն Կոնվենցիայի մեջ չմտնող այլ նյութերի արտադրության քանակը,
 - c) Արտահանված քանակությունը,
 - d) Պահուստին ավելացված քանակը, որը կատարվել է այդ պահուստը համապատասխան գնահատման մակարդակին հասցնելու համար և
 - e) Հատուկ նպատակների համար համապատասխան գնահատման սահմանափակման շրջանակներում գնված քանակությունը:
2. Պարբերություն 1 սահմանված քանակությունների հանրագումարից պետք է հանել ցանկացած այն քանակությունը, որն առգրավվել և դրվել է օրինական շրջանառության մեջ, ինչպես նաև ցանկացած այն քանակությունը, որը վերցվել է հատուկ պահեստներից քաղաքացիական բնակչության պահանջների համար:
3. Եթե Տնօրենների Խորհուրդը գտնում է, որ ցանկացած տարում արտադրված և ներմուծված քանակությունը գերազանցում է պարբերություն 1 սահմանված քանակությունների հանրագումարը, հանած սույն Հոդվածի պարբերություն 2 պահանջվող ցանկացած կրճատում, ապա տարվա վերջում մնացած ցանկացած գերազանցում հաջորդ տարի պետք է կրճատվի արտադրվելիք կամ ներմուծվող քանակից և Հոդված 19 պարբերություն 2 սահմանված գնահատումների ընդհանուր քանակից:
4. a) Եթե ներմուծման և արտահանման (Հոդված 20) արդյունքներից պարզ է դառնում, որ ցանկացած երկիր կամ տարածք արտահանված քանակությունը գերազանցում է այդ երկրի կամ տարածքի համար գնահատումների ընդհանուր գումարը, ինչպես սահմանված է Հոդված 19 պարբերություն 2, ավելացրած արտահանման համար ցույց տրված քանակները և սույն

Հողվածի պարբերություն 3 սահմանված ցանկացած գերազանցումի հանելուց հետո, ապա Տնօրենների Խորհուրդը կարող է սրա մասին տեղյակ պահել Պետություններին, որոնք, ըստ Տնօրենների Խորհրդի, պետք է սրա մասին տեղյակ պահվեն,

b) Այս կերպով տեղյակ պահելուց հետո Կողմերը այդ տարվա ընթացքում պետք է լիազորեն տվյալ թմրամիջոցների ցանկացած հետագա արտահանումը այդ երկիր կամ տարածք, բացառությամբ`

- i) այն դեպքերի, երբ լրացուցիչ գնահատում է անհրաժեշտ այն երկրի առումով, որտեղ պետք է կամ առաքվի ցանկացած քանակություն կամ պահանջվում է լրացուցիչ քանակություն կամ
- ii) բացառիկ դեպքերում երբ արտահանումը, ըստ արտահանող երկրի Կառավարության, էական է հիվանդների բուժման համար:

Հողված 21 bis

ՕՊԻՈՒՄԻ ԱՐՏԱԴՐՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓՈՒԿՈՒՄԸ

1. Ցանկացած երկրի կամ տարածքի կողմից օպիումի պատրաստումը պետք է այնպես կազմակերպվի և վերահսկվի, որպեսզի հնարավորինս ապահովվի` ցանկացած տարում արտադրված` Հողված 19 պարբերություն 1 *բ)* սահմանված, արտադրվելիք օպիումի քանակի չգերազանցելը:

2. Եթե Տնօրենների Խորհուրդը` սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան, իր տրամադրության տակ եղած տեղեկատվության հիման վրա, գտնում է, որ Կողմը, որը ներկայացրել Հողված 19 պարբերություն 1 *բ)* սահմանված գնահատականները, չի սահմանափակել իր սահմաններում արտադրվող օպիումի քանակը օրինական նպատակների չափով համապատասխան քանակների գնահատմամբ և որ այս Կողմի սահմաններում օրինական կամ անօրինական արտադրված օպիումի զգալի քանակությունը դրվել է անօրինական շրջանառության մեջ, ապա այն կարող է, տվյալ կողմի բացատրությունները լսելուց հետո, որը Կողմը պարտավոր է ներկայացնել համապատասխան տեղեկատվություն ստանալուց մեկ ամսվա ընթացքում, որոշել կրճատել ամբողջ քանակությունները կամ դրանց մի մասը այն քանակությունից, որը պետք է արտադրվի և հաջորդ տարվա համար նախատեսված Հողված 19 բարբերություն 2 *բ)* սահմանված գնահատման ընդհանուր քանակից, երբ նման կրճատումը տեխնիկապես հնարավոր է` հաշվի առնելով տարվա եղանակը և օպիումի արտահանման պայմանագրային պարտավորությունները: Այս որոշումը պետք է ուժի մեջ մտնի համապատասխան Կողմին տեղյակ պահելուց իննսուն օր հետո:

3. Վերը նշված պարբերություն 2 սահմանված կրճատման մասին որոշման մասին Կողմին տեղյակ պահելուց հետո Տնօրենների Խորհուրդը պետք է խորհրդակցի Կողմի հետ` խնդրին բավարար լուծում տալու նպատակով:

4. Եթե իրավիճակին բավարար լուծում չի տրվել, ապա Տնօրենների Խորհուրդը կարող է կիրառել Հողված 14 դրույթները:

5. Վերը նշված պարբերություն 2 սահմանված կրճատման մասին որոշում կայացնելիս` Տնօրենների Խորհուրդը պետք է հաշվի առնի ոչ միայն բոլոր համապատասխան հանգամանքները, ներառյալ վերը նշված պարբերություն 2 սահմանված կրճատման մասին որոշումը, այլ նաև վերահսկման ցանկացած այլ միջոցառում, որը կարող էր կիրառել Կողմը:

Հոդված 22

ՄՇԱԿՄԱՆ ՀԱՆԴԵՊ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԱՏՈՒԿ ԴՐՈՒՅԹ

1. Երբ Կողմի երկրի կամ տարածքի հիմնական պայմանները, ըստ վերջինիս, հանրային առողջապահական և բարեկեցության նպատակներից կամ թմրամիջոցների անօրինական շրջանառության վտանգից դրդված, արգելում են օպիումի կակաչի, կոկայի թփի կամ կանաբիսի բույսի մշակումը, ապա Կողմը պետք է արգելի մշակումը:
2. Օպիումի կակաչի կամ կանաբիսի բույսի մշակումն արգելող երկիրը պետք է համապատասխան միջոցառումներ ձեռնարկի, որպեսզի առգրավի անօրինական ճանապարհով մշակված ցանկացած բույս և վերացնի դրանք, բացառությամբ գիտական կամ հետազոտական նպատակներով Կողմի կողմից պահանջվող փոքր քանակությունները:

Հոդված 23

ՕՊԻՈՒՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Կողմը, որը թույլատրում է օպիումի արտադրության համար օպիումի կակաչի մշակումը, պետք է ստեղծի, եթե դեռ չի ստեղծել և շահագործի մեկ կամ ավել կառավարական գործակալություններ (սույն Հոդվածում այսուհետ՝ Գործակալություն), որպեսզի իրականացնի սույն Հոդվածով պահանջվող ֆունկցիաները:
2. Յուրաքանչյուր այսպիսի Կողմ պետք է կիրառի օպիումի և օպիումի արտադրության համար օպիումի կակաչի մշակման հետևյալ դրույթները՝
 - a) Գործակալությունը պետք է սահմանի այն գոտիները և հողատարածքները, որտեղ օպիումի արտադրության համար թույլատրվում է օպիումի կակաչի մշակումը:
 - b) Միայն Գործակալության կողմից լիցենզավորված մշակողները կարող են նման գործունեություն ծավալել:
 - c) Յուրաքանչյուր լիցենզիա պետք է սահմանի հողատարածքի չափը, որտեղ թույլատրվում է մշակում իրականացնել:
 - d) Օպիումի կակաչի բույսի մշակողներից պետք է պահանջել իրենց ամբողջ բերքը առաքել Գործակալությանը: Գործակալությունը պետք է հնարավորինս շուտ գնի և իր տրամադրության տակ ունենա այսպիսի բերքը, բայց ոչ ուշ, քան բերքահավաքի վերջից չորս ամիս հետո:
 - e) Օպիումի առումով Գործակալությունը պետք է արտահանման, ներմուծման, մեծածախ վաճառքի և պահուստների (բացառությամբ օպիումի ակալոիդի, բժշկական օպիումի կամ օպիումի պատրաստուկների) բացառիկ իրավունք ունենա: Կողմերը պարտավոր չեն այս իրավունքը կիրառել բժշկական օպիումի և օպիումի պատրաստուկների առումով:
3. Պարբերություն 2 նշված կառավարության ֆունկցիաները պետք է տրվեն կառավարության միայն մեկ գործակալությանը, եթե Կողմի սահմանադրությունը դա թույլարում է:

Հոդված 24

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ՀԱՄԱՐ ՕՊԻՈՒՄԻ ԱՐՏԱԴՐՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓՈՒԿՈՒՄԸ

1. a) Եթե ցանկացած Կողմ ցանկանում է սկսել օպիումի արտադրում կամ մեծացնել գործող արտադրությունը, ապա այն պետք է հաշվի առնի աշխարհի օպիումի գերակա պահանջարկը՝ Տնօրենների Խորհրդի կողմից գրանցված քանակների համաձայն, որպեսզի այս Կողմի արտադրված օպիումը չհանգեցնի օպիումի համաշխարհային շուկայի գերարտադրմանը:
b) Կողմը չպետք է թույլատրի օպիումի պատրաստումը կամ գործող արտադրման մեծացումը, եթե, ըստ վերջինիս, այսպիսի պատրաստումը կամ մեծացված պատրաստումը իր տարածքում կարող է օպիումի անօրինական շրջանառության պատճառ հանդիսանալ:
2. a) Ենթակա պարբերություն 1, երբ Կողմը, որը 1961 հունվարի 1 դրությամբ արտահանման համար օպիում չի պատրաստում, ցանկանում է արտահանել արտադրված օպիումը, տարեկան հինգ տոննայից ոչ ավել, ապա այն պետք է տեղյակ պահի Տնօրենների Խորհրդին՝ տրամադրելով հետևյալ տեղեկությունները՝
 - i) Սույն Կոնվենցիայով պահանջվող ուժի մեջ եղած վերահսկումները՝ արտադրվող և արտահանվող օպիումի վերաբերյալ և
 - ii) Այս օպիումի արտահանման երկիրը կամ ակնկալվող արտահանման երկիրը,և Տնօրենների Խորհուրդը կարող է կամ հաստատել այս տեղեկատվությունը, կամ առաջարկել Կողմին, որպեսզի այն չներգրավվի արտահանման համար օպիումի արտադրության մեջ:
b) Երբ պարբերություն 3 չնշված Կողմը ցանկանում է տարեկան հինգ տոննան գերազանցող արտահանման համար օպիում արտադրել, ապա այն պետք է տեղյակ պահի Խորհրդին՝ տրամադրելով համապատասխան տեղեկատվությունը՝
 - i) արտահանման համար արտադրվելիք գնահատված քանակները,
 - ii) արտադրվելիք օպիումի հանդեպ գործող կամ առաջարկվող վերահսկումները,
 - iii) այս օպիումի արտահանման երկիրը կամ ակնկալվող արտահանման երկիրը,և Խորհուրդը կարող է կամ հաստատել այս տեղեկատվությունը, կամ առաջարկել Կողմին, որպեսզի այն չներգրավվի արտահանման համար օպիումի արտադրության մեջ:
3. Պարբերություն 2 ենթապարբերություններ *a)* և *b)* դրույթներից անկախ՝ Կողմը, որը 1961 հունվարի 1 անմիջապես նախորդող տաս տարիների ընթացքում արտահանել է սեփական արտադրության օպիում, կարող է շարունակել սեփական արտադրության օպիումի արտահանումը:
4. a) Կողմը պետք է ներմուծի օպիում միայն արտադրող երկրից կամ տարածքից: Դրանք են՝
 - i) Պարբերություն 3 նշված Կողմը,
 - ii) Կողմը, որը համաձայն պարբերություն 2, ենթապարբերություն *a)* տեղյակ է պահել Տնօրենների Խորհրդին կամ
 - iii) Կողմը, որը պարբերություն 2, ենթապարբերություն *a)* սահմանված կարգով ստացել է Խորհրդի հավանությունը:b) Սույն պարբերության ենթապարբերություն *a)* դրույթներից անկախ՝ Կողմը կարող է ներմուծել ցանկացած երկրում արտադրված օպիում, որը 1961

հունվարի 1 անմիջապես նախորդող տաս տարիների ընթացքում արտահանել է սեփական արտադրության օպիում, եթե այս երկիրը ստեղծել և շահագործել է Հոդված 23 նախատեսված վերահսկման մարմինը կամ գործակալությունը և այնպիսի արդյունավետ միջոցներ, որոնք ապահովում են իր արտադրված օպիումը անօրինական շրջանառության մեջ չդնելը:

5. Սույն Հոդվածի դրույթները Կողմին չեն կանխարգելում՝

a) սեփական պահանջների բավարարման համար օպիում արտադրել կամ

b) անօրինական շրջանառությունից առգրավված օպիումի արտահանումն այդ Կողմի երկիր՝ համաձայն սույն Կոնվենցիայի պահանջների:

Հոդված 25

ԿԱԿԱԶԻ ՑՈՂՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ

1. Կողմը, որը թույլատրում է օպիումի պատրաստումից բացի այլ նպատակների համար օպիումի արտադրությունը, պետք է ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցառումները, որպեսզի ապահովի, որ՝

a) այդ օպիումը չի արտադրվել այսպիսի օպիումի կակաչներից և

b) կակաչի ցողունից թմրամիջոցների արտադրման պատշաճ վերահսկումը:

2. Կողմերը պետք է կիրառեն Հոդված 31 պարբերություններ 4-ից 15 սահմանված կակաչի ցողունի ներմուծման համակարգի վկայականները և արտահանման թույլատրությունները:

3. Կողմերը պետք է վիճակագրական տեղեկատվություն տրամադրեն կակաչի ցողունի արտահանման և ներմուծման վերաբերյալ, ինչպես պահանջում են Հոդված 20 պարբերություններ 1 d) և 2 b):

Հոդված 26

ԿՈԿԱՅԻ ԹՈՒՓ և ԿՈԿԱՅԻ ՏԵՐԵՎՆԵՐ

1. Եթե Կողմը թույլատրում է կոկայի թփի մշակումը, ապա այն պետք է դրա և կոկայի տերևների հանդեպ կիրառի Հոդված 23 սահմանված վերահսկման համակարգը, որը վերաբերում է օպիումի կակաչին, բայց այդ Հոդվածի պարբերություն 2 d)-ով նախատեսված է, որ Գործակալության պահանջները կիրառվում են միայն բերքահավաքից հետո հնարավորինս շուտ բերքի ֆիզիկական տիրապետման նպատակով:

2. Կողմերը պետք է հնարավորինս իրականացնեն վայրի բնության մեջ աճող կոկայի թփերի արմատախիլ անելը: Կողմերը պետք է վերացնեն նաև անօրինաբար մշակվող կոկայի թփերը:

Հոդված 27

ԿՈԿԱՅԻ ՏԵՐԵՎՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Կողմերը կարող են թույլատրել կոկայի տերևների օգտագործումը համային համեմունքների պատրաստման համար, որը չպետք է պարունակի ալկաոիդներ և այսպիսի օգտագործման անհրաժեշտության պարագայում կարող է թույլատրել այսպիսի տերևների պատրաստումը, ներմուծումը, արտահանումը, վաճառքը և պահելը:

2. Կողմերը պետք է առանձին (Հոդված 19) և վիճակագրական տեղեկություններ (Հոդված 20) տրամադրեն համային համեմունքների պարտրաստման համար կոկայի տերևների առունով, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ նույն կոկայի տերևները կարող են օգտագործվել ակալոիդի ստացման համար և համային համեմունքի առունով՝ այսպիսով բացատրելով գնահատումներն ու վիճակագրական տեղեկատվությունը:

Հոդված 28

ԿԱՆԱՔԻՍԻ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ

1. Եթե կողմը թույլատրում է կանաքիսի կամ կանաքիսի խեժի արտադրության համար կանաքիսի բույսի արտադրությունը, ապա այն պետք է կիրառի վերահսկման այն համակարգը, որը նախատեսված է Հոդված 23-ում՝ օպիումի կակաչի վերահսկման առունով:
2. Սույն Կոնվենցիան չի կիրառվում զուտ արդյունաբերական (մանրաթել և սերմ) և դեկորատիվ նպատակներով կանաքիսի մշակման դեպքում:
3. Կողմերը պետք է իրականացնեն այնպիսի միջոցառումներ, որոնք անհրաժեշտ են կանաքիսի բույսի տերևների սխալ օգտագործումը և անօրինական շրջանառությունը կանխարգելու համար:

Հոդված 29

ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. Կողմերը պետք է պահանջեն, որպեսզի թմրամիջոցների արտադրությունը կատարվի լիցենզիայով, բացառությամբ այն դեպքերի, երբ այսպիսի արտադրությունը իրականացվում է Պետության կան Պետական ձեռնարկությունների կողմից:
2. Կողմերը պետք է՝
 - a) վերահսկեն բոլոր անձանց և ձեռնարկություններին, որոնք իրականացնում կամ ներգրավված են թմրամիջոցների արտադրության մեջ;
 - b) վերահսկեն լիցենզավորված այն հաստատությունները և շենքերը, որտեղ այսպիսի արտադրություն է իրականացվում և
 - c) Պահանջեն, որ թմրամիջոցների լիցենզավորված արտադրողները պարբերաբար թույլատվություններ ստանան՝ մասնավորեցնելով թմրամիջոցների տեսակները և քանակները, որոնց արտադրելու համար նրանք իրավունք ունեն: Սակայն պարբերական թույլատվությունը չպետք է պահանջվի պատրաստուկների համար:
3. Կողմերը պետք է կանխարգելեն թմրամիջոցների արտադրողների տրամադրության տակ գտնվող գործունեության նորմալ իրականացման համար պահանջվող քանակությունից ավել թմրամիջոցների և կակաչի ցուղունի կուտակումը՝ հաշվի առնելով շուկայի գերակա պայմանները:

Հոդված 30

ՎԱՃԱՔԸ ԵՎ ԲԱՇԽՈՒՄԸ

1. a) Կողմերը պետք է պահանջեն, որպեսզի թմրամիջոցների վաճառքը և բաշխումը կատարվի լիցենզիայով նախատեսված կարգով՝ բացառությամբ երբ այսպիսի վաճառքը և բաշխումը կատարվում է Պետական ձեռնարկությունների և Պետության կողմից:
b) Կողմերը պետք է՝
 - i) Վերահսկեն բոլոր անձանց և ձեռնարկություններին, որոնք իրականացնում կամ ներգրավված են թմրամիջոցների վաճառքի կամ բաշխման գործունեության մեջ:
 - ii) Վերահսկեն լիցենզավորված այն հաստատությունները և շենքերը, որտեղ այսպիսի արտադրություն է իրականացվում: Լիցենզավարման պահանջը չպետք է կիրառվի պատրաստուկների հանդեպ:
 - c) Ենթապարբերություններ *a)* և *b)* դրույթները, որոնք վերաբերում են լիցենզավորմանը, չեն կիրառվում այն անձանց հանդեպ, որոնք լիազորված են և իրականացնում են թերապևտիկ կամ գիտական ֆունկցիաներ:
2. Կողմերը պետք է նաև՝
 - a) Կանխարգելեն վաճառողների, առաքողների, Պետական ձեռնարկությունների կամ վերը նշված արտոնագրված անձանց տրամադրության տակ գտնվող գործունեության նորմալ իրականացման համար պահանջվող քանակությունից ավել թմրամիջոցների և կակաչի ցուղունի կուտակումը՝ հաշվի առնելով շուկայի գերակա պայմանները և
 - b) i) Բժշկական դուրս գրում պահանջել անհատներին տրամադրվող թմրամիջոցների համար: Այս պահանջը չի կիրառվում այն թմրամիջոցների հանդեպ, որոնք անհատները կարող են օրինական կերպով ձեռք բերել, օգտագործել, սպառել կամ ունենալ՝ իրենց լիցենզավորված թերապևտիկ գործունեության հետ կապված և
 - ii) Եթե Կողմերը այս միջոցառումներն անհրաժեշտ և ցանկալի են դիտարկում են, ապա պետք է պահանջեն, որպեսզի Ցանկ I նախատեսված թմրամիջոցների դուրս գրումը կատարվի պաշտոնական ձևերի վրա, որը պետք է թողարկվի կառավարության լիազոր մարմինների կամ լիազորված մասնագիտական միությունների գրքույկների տեսքով:
 3. Ցանկալի է, որպեսզի Կողմերը պահանջեն, որ թմրամիջոցների գրավոր կամ տպագիր առաջարկությունները, թմրամիջոցներին վերաբերող ցանկացած տեսակի զովագոյները կամ նկարագրական գրականությունը և օգտագործվող առևտրային նպատակների համար, թմրամիջոցներ պարունակող ներքին փաթեթավորումները և պիտակները, որոնցով թմրամիջոցներն առաջարկվում են վաճառքի համար, մատնանշեն Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության կողմից տրամադրված միջազգային ոչ-սեփականատիրական անվանումը:
 4. Եթե Կողմը այսպիսի միջոցառումը համարում է անհրաժեշտ կամ ցանկալի, ապա այն պետք է պահանջի, որպեսզի թմրանյութ պարունակող ներքին փաթեթավորումը կամ փաթեթը լավ երևացող երկակի կարմիր ժապավեն կրի: Տուփի արտաքին փաթեթավորումը, որի մեջ այսպիսի թմրանյութ է պարունակվում, չպետք է այսպիսի երկակի կարմիր ժապավեն կրի:
 5. Կողմը պետք է պահանջի, որպեսզի վաճառքի առաջարկված պիտակին, նշված լինի թմրանյութի քաշը և տոկոսային պարունակությունը: Պիտակային տեղեկատվության

սույն պահանջը չի կիրառվում անհատին բժշկական դուրս գրմամբ տրված թմրամիջոցների հանդեպ:

6. Պարբերություններ 2 և 5 դրույթները չեն կիրառվում Ցանկ II-ի թմրամիջոցների մանրածախ առևտրի կամ բաշխման դեպքում:

Հոդված 31

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՏՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Կողմերը գիտակցաբար չպետք է թույլատրեն թմրամիջոցների արտահանումը ցանկացած երկիր կամ տարածք՝ բացառությամբ՝

a) Այդ երկրի կամ տարածքի օրենքներին և կանոնակարգերին համաձայն և

b) Այդ երկրի կամ տարածքի ընդհանուր գնահատման սահմանափակումների շրջանակում, ինչպես սահմանված է Հոդված 19 պարբերություն 2՝ ի լրումն վերաարտահանման համար նախատեսված քանակների:

2. Կողմերը պետք է ազատ նավահանգիստների և գոտիների հանդեպ կիրառեն նույն վերահսկումն ու ստուգումը, ինչ որ ինրեւնց տարածքների այլ մասերի հանդեպ՝ սակայն հաշվի առնելով, որ դրանք կարող են ավելի խիստ միջոցառումներ կիրառել:

3. Կողմերը պետք է՝

a) Վերահսկեն թմրամիջոցների լիցենզավորված արտահանումն ու ներմուծումը՝ բացառությամբ, երբ այս արտահանումն ու ներմուծումը կատարվում է Պետության կամ Պետական ձեռնարկությունների կողմից,

b) Ստուգեն բոլոր անձանց և ձեռնարկություններին, որոնք այսպիսի արտահանում և ներմուծում են իրականացնում:

4. a) Թմրանյութերի արտահանում կամ ներմուծում թույլատրող ցանկացած Կողմ յուրաքանչյուր արտահանման և ներմուծման համար պետք է պահանջի արտահանման և ներմուծման առանձին թույլատվություն՝ կազմված մեկ կամ ավել թմրամիջոցներից:

b) Այսպիսի թույլատվությունը պետք է հստակորեն նշի թմրանյութի անվանումը, միջազգային ոչ-սեփականատիրական անվանումը, եթե այդպիսին կա, արտահանվող կամ ներմուծվող քանակը և արտականոդի ու ներմուծողի անվանումն ու հասցեն և պետք է սահմանի այն ժամանակահատվածը, որի շրջանակներում պետք է իրականացվի արտահանումը կամ ներմուծումը:

c) Արտահանման թույլատվությունը պետք է հստակորեն սահմանի նաև ներմուծման վկայականի համարն ու ամսաթիվը (պարբերություն 5) և այն լիզոր մարմինը, որը դա տվել է:

d) Ներմուծման թույլատվությունը կարող է թույլատրել մեկից ավել ներմուծման առաքում:

5. Արտահանման թույլատվություն տալուց առաջ Կողմերը պետք է պահանջեն ներմուծող երկրի կամ տարածքի համապատասխան մարմինների կողմից տրված ներմուծման թույլատվություն և հաստատում, և որ դրանցում նշված թմրանյութի կամ թմրամիջոցների ներմուծումը հաստատված է: Այսպիսի վկայական պետք է ներկայացնի արտահանման թույլատվության դիմած անձը կամ հաստատությունը: Կողմերը պետք է հնարավորինս հետևեն Հանձնաժողովի կողմից հաստատված ներմուծման վկայականի ձևին:

6. Արտահանման թույլատվության մի օրինակ պետք է կցված լինի յուրաքանչյուր առաքմանը և արտահանման թույլատվություն տված Կառավարությունը պետք է արտահանման թույլատվության մի օրինակ ուղարկի ներմուծող երկրի կամ տարածքի Կառավարությանը:

7. a) Երբ ներմուծումն արված է կամ երբ ներմուծման համար սահմանված ժամանակն ավարտվել է, ներմուծող երկրի կամ տարածքի Կառավարությունը պետք է վերադարձնի արտահանման թույլատվությունը՝ արտահանող երկրի կամ տարածքի Կառավարությանը հաստատելով այդ փաստը,

b) Հաստատումը պետք է մատնանշի փաստացիորեն ներմուծված քանակը,

c) Եթե արտահանվել է ավելի քիչ քանակություն, քան սահմանված է արտահանման թույլատվության մեջ, ապա փաստացիորեն արտահանված քանակը պետք է համապատասխան մարմինների կողմից նշվի արտահանման թույլատվության և ցանկացած այլ պաշտոնական փաստաթղթի մեջ:

8. Առաքման արտահանումը արգելվում է, եթե բացի արտահանման թույլատվությունից Կողմի փոստային գրասենյակ կամ բանկային հաշվի վրա:

9. Արգելվում է առաքման արտահանումը գրավի պահեստ, եթե ներմուծող երկրի Կառավարությունը չի հաստատում արտահանման թույլատվության դիմած անձի կամ հաստատության կողմի տրամադրված ներմուծման վկայականը, առ այն, որ գրավի պահեստում տեղակայելու համար ներմուծումը հաստատվել է: Այսպիսի դեպքում արտահանման թույլատվությունը պետք է մատնանշի, որ առաքումը արտահանվում է այս նպատակով: Գրավի պահեստից յուրաքանչյուր առհանում պետք է պահեստի ղեկավարության թույլատվությունն ունենա և օտարերկրյա պետություն արտահանելու պարագայում դրան պետք է վերաբերեն, որպես սույն Կոնվենցիայիով նախատեսված մի նոր արտահանում:

10. Թույլատրություն չունեցող Կողմի տարածքը մտնող կամ դուրս եկող թմրամիջոցների առաքումները պետք է առգրավվեն համապատասխան մարմինների կողմից:

11. Կողմը չպետք է թույլ տա սեփական տարածքով ցանկացած թմրանյութի առաքումը մի այլ երկրի, անկախ այդ առաքման ճանապարհից շեղվելու կամ չշեղվելու հանգամանքից, եթե այսպիսի առաքման համար այս Կողմի համապատասխան մարմինները չեն տվել արտահանման թույլատվություն:

12. Ցանկացած երկրի կամ տարածքի, որի միջոցով թույլատրված է թմրանյութի անցումը, լիազոր մարմինները պետք է համապատասխան միջոցառումներ ձեռնարկեն, որպեսզի կանխարգելեն արտահանման թույլատվության մեջ նշված երկրից բացի մեկ այլ երկիր առաքման տեղափոխումը, եթե այդ երկրի կամ տարածքի Կառավարությունը, որի միջով անցնում է առաքումը, չի թույլատրում շեղումը: Տարանցիկ երկրի կամ տարածքի Կառավարությունը պետք է շեղման ցանկացած խնդրանքի վերաբերվի այնպես, ասես դա արտահանում է տարանցիկ երկրից կամ տարածքից դեպի նոր երկիր կամ տարածք: Եթե շեղումը թույլատրվում է, ապա տարանցիկ երկրի կամ տարածքի կամ առաքման համար սկզբնապես նախատեսված երկրի կամ տարածքի հանդեպ կիրառվում են պարբերություն 7 a) և b) դրույթները:

13. Տարանցիկ փոխադրման ընթացքում կամ գրավի պահեստում գտնվող թմրամիջոցների ոչ մի առաքում չի կարող ենթարկվել ոչ մի գործընթացի, որը կփոխեր

տվյալ թմրանյութի բնույթը: Առանց համապատասխան մարմինների թույլատվության փաթեթավորումը չի կարող փոխվել:

14. Կողմի տարածով անցնող թմրամիջոցներին վերաբերող պարբերություններ 11-ից 13-ի դրությամբ չեն կիրառվում, երբ տվյալ առաքումը կատարվում է օդանավի միջոցով, որը վայրէջք չի կատարում տարանցիկ երկրում: Եթե օդանավը վայրէջք է կատարում ցանկացած այսպիսի երկրում կամ տարածքում, ապա այդ դրությամբը պետք է կիրառվեն ըստ հանգամանքների:

15. Առանց նախապաշարմունքների սույն Հոդվածի դրությամբը կիրառվում են ցանկացած միջազգային համաձայնագրերի հանդեպ, որոնք սահմանափակում են ստուգումը, որը կարող է իրականացվել թմրամիջոցների տարանցիկ առումով ցանկացած Կողմի կողմից:

16. Սույն Հոդվածի պարբերություններ 1 a) և 2 բացի ոչ մի դրույթ չի կիրառվում Ցանկ III նախատեսված պատրաստուկների հանդեպ:

Հոդված 32

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ՆԱԿԵՐԻ և ՕՂԱՆԱԿԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՈՒՓԵՐՈՒՄ ԵՂԱԾ ԹՄՐԱՆՅՈՒԹԵՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՆԸ ԿԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՏՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Թմրանյութերի այսպիսի սահմանափակված քանակությունների միջազգային փոխադրումը նավերի կամ օդանավերի միջոցով, որը կարող է անհրաժեշտ լինել ճանապարհորդության ընթացքում առաջին օգնության կամ արտակարգ իրավիճակների նպատակների համար, չպետք է համարվի երկրի տարածքով կատարվող արտահանում, ներմուծում կամ անցում՝ սույն Կոնվենցիայի համաձայն:

2. Համապատասխան միջոցառումները պետք է ձեռնարկվեն գրանցման երկրի կողմից, որպեսզի կանխարգելեն այսպիսի թմրամիջոցների ոչ ըստ նշանակության օգտագործումը, նշված պարբերություն 1 կամ դրանց շեղումը ապօրինի նպատակներով: Հանձնաժողովը, խորհրդակցելով համապատասխան միջազգային կազմակերպությունների հետ, պետք է առաջարկի այսպիսի անվտանգության միջոցներ:

3. Համաձայն պարբերություն 1՝ նավերով կամ օդանավերով փոխադրվող թմրամիջոցները պետք է ենթարկվեն գրանցման երկրի օրենքներին, կանոնակարգերին, թույլատվություններին և լիցենզիաներին՝ առանց տեղական համապատասխան մարմինների նավերի կամ օդանավերի վրա ստուգումների, տեսչությունների և այլ վերահսկման միջոցառումների հանդեպ անհանդուրժողականության դրսևորման: Այսպիսի թմրամիջոցների վարչարարությունը արտակարգ իրավիճակներում չպետք է դիտարկվի Հոդված 30 պարբերություն 2 b) պահանջների օրինախախտումներ:

Հոդված 33

ԹՄՐԱՆՅՈՒԹԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒՄ (ՊԱՀՈՒՄ)

Կողմերը չպետք է թույլատրեն թմրամիջոցների տիրապետումը (պահումը)՝ բացառությամբ օրենքով նախատեսված կարգով:

Հոդված 34
ԿԵՐԱՀՍԿՄԱՆ և ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Կողմերը պետք է պահանջեն՝

- a) Որ բոլոր այն անձինք, որոնք սույն Կոնվենցիայի համաձայն, ձեռք են բերում լիցենզիաներ կամ որոնք Պետական ձեռնարկությունում ղեկավար դիրք են գրավում, պետք է այսպիսի օրենքների և կանոնակարգերի դրույթերի արդյունավետ իրականացման համար համապատասխան որակավորումներ ունենան, ինչպես որ սահմանված է և
- b) Որ կառավարական մարմինները, արտադրողները, վաճառողները, գիտնականները, գիտական հաստատությունները և հիվանդանոցները գրանցամատյաններ պահեն, որոնցում նշված կլինեն թմրանյութի արտադրված, յուրաքանչյուր ձեռքբերման և հեռացման քանակները: Այսպիսի գրանցումները պետք է պատշաճորեն պահպանվեն երկու տարուց ոչ պակաս ժամանակահատվածում: Պաշտոնական դուրս գրման գրանցամատյանների (Հոդված 30 պարբերություն 2 b) օգտագործման պարագայում՝ դրանք պետք է ներառեն այն գրանցամատյանները, որոնք պահվում են երկու տարուց ոչ պակաս ժամանակահատվածով:

Հոդված 35
ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով սեփական սահմանադրական, իրավական և վարչական համակարգերը՝ Կողմերը պետք է՝

- a) Ապօրինի շրջանառության դեմ կանխարգելիչ և ճնշող գործողությունների համակարգման միջոցառումներ ձեռնարկեն ազգային մակարդակով: Այս նպատակով կարող են ստեղծել այսպիսի համակարգումն իրականացնող համապատասխան գործակալություն,
- b) Աջակցեն միմյանց թմրանյութերի ապօրինի շրջանառության դեմ քարոզարշավներում,
- c) Սերտորեն համագործակցեն միմյանց և համապատասխան միջազգային կազմակերպությունների հետ, որոնց անդամ են հանդիսանում՝ փորձելով համակարգված քարոզարշավ իրականացնել ապօրինի շրջանառության դեմ պայքարում,
- d) Ապահովեն, որպեսզի համապատասխան գործակալությունների միջև համակարգումը կատարվի արագ կերպով,
- e) Ապահովեն հետաքննչական նպատակներով փաստաթղթերի փոխանցումը միջազգային մասշտաններով, ապա դրանց արագ փոխանցումը Կողմի նշանակված համապատասխան մարմնին: Սույն պահանջը պետք է հաշվի առնի Կողմի՝ նման գործողությունները դիվանագիտական ուղիներով կատարելու իրավունքը,
- f) Գլխավոր Քարտուղարի միջոցով Տնօրենների Խորհրդին և Հանձնաժողովին տրամադրեն, եթե տեղին են գտնում, ի լրումն Հոդված 18 տեղեկատվության, այն տեղեկատվությունը, որը վերաբերում է իրենց սահմաններում թմրանյութի հետ կապված ապօրինի գործողություններին՝

ներառյալ ապօրինի մշակումը, արտադրությունը, պատրաստումը և օգտագործումը, ինչպես նաև թմրանյութի ապօրինի շրջանառությունը և
g) Հնարավորինս այսպես ներկայացնել նախորդ պարբերությանը վերաբերող տեղեկատվությունը և այնպիսի ժամանակահատվածներում, ինչպես խնդրել է այդ մասին Տնօրենների Խորհրդը. եթե Կողմը դիմել է այդ հարցումով, Տնօրենների Խորհուրդը կարող է իր խորհրդատվությունն առաջարկել՝ այդ Կողմի սահմաններում թմրամիջոցների հետ կապված ապօրինի շրջանառության մակարդակը նվազեցնելու նպատակով:

Հոդված 36

ՊԱՏԺԱՍԻԶՈՑՆԵՐԻ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. a) Իր սահմանադրական սահմանափակումներին համապատասխան՝ յուրաքանչյուր Կողմ պետք է այնպիսի միջոցառումներ ձեռնարկի, որոնք կապահովեն պատժի կիրառումը թմրամիջոցների մշակման, արտադրության, պատրաստման, տիրապետման, առաջարկելու, վաճառքի առաջարկելու, բաշխելու, գնելու, վաճառելու, ցանկացած միջոցներով առաքելու, սփռելու, տարանցիկ փոխադրումների, տրանսպորտի միջոցով սփռելու, ներմուծելու և արտահանելու և այլ օրինախախտումների դեպքում, որոնք միտումնավոր են կատարվել և Կողմի կարծիքով կարող են հակասել սույն Կոնվենցիայի դրույթներին, իսկ լուրջ օրինախախտումները համապատասխան պատիժների կարժանանան՝ մասնավորապես բանտարկում կամ ազատազրկման այլ պատժամիջոցներ:
b) Նախկին պարբերությունից անկախ՝ երբ թմրամիջոցների չարաշահողները այսպիսի օրինախախտումներ են թույլ տվել, Կոմերը կարող են սահմանել, կամ որպես մեղադրանքի կամ պատժի այլընտրանք կամ ի լիրումն մեղադրանքի կամ պատժի, որ այսպիսի չարաշահողները պետք է բուժման, կրթության, ետխնամքի, վերականգնման կամ սոցիալական վերաինտեգրացման ենթարկվեն՝ համաձայն Հոդված 38 պարբերություն 1:
2. Կողմի սահմանադրական, իրավական համակարգի և ներքին իրավունքի ընթացակարգերին համաձայն՝
 - a) i) Պարբերություն 1 նշված օրինախախտումներից յուրաքանչյուրը, եթե կատարվել է տարբեր երկրներում, ապա պետք է դիտարկվի, որպես առանձին օրինախախտում,
 - ii) Ցանկացած այսպիսի օրինախախտումները գաղտնի կերպով կատարելու կամ փորձելու դեպքում, սույն Հոդվածով նախատեսված օրինախախտումների հետ կապված նախապատրաստական գործողությունների և ֆինանսական գործառույթների միտումնավոր մասնակցությունը պետք է պատժվի՝ պարբերություն 1 սահմանված կարգով,
 - iii) Այսպիսի օրինախախտումներների օտարերկրյա մեղադրանքները պետք է հաշվի առնեն ռեցեդիվիզմը սահմանելու նպատակը և
 - iv) Այսուհետ նշված լուրջ օրինախախտումները, կատարված տեղացիների կամ օտարերկրացիների կողմից, պետք է հետաքննի այն Կողմը, որի տարածքում է կատարվել օրինախախտումները կամ որի տարածքում է գտնվել օրինախախտը, եթե արտաքսումը ընդունելի չէ՝

դիմող Կողմի օրենսդրության համաձայն և եթե այսպիսի օրինախախտը դեռ չի հետաքննվել և դատապարտվել:

- b) i) Սույն Հոդվածի պարբերություններ 1 և 2 a) ii) սահմանված յուրաքանչյուր օրինախախտումներ պետք է դիտարկվի, որպես արտաքսման հանգեցնող օրինախախտումներ՝ Կողմերի միջև եղած ցանկացած արտաքսման համաձայնագրի համաձայն: Կողմերը պարտավորվում են միմյանց միջև կնքվող համաձայնագրերում ներառել այսպիսի օրինախախտումներն էրը, որպես արտաքսման ենթակա օրինախախտումներն էր:
- ii) Եթե Կողմը, որը պայմանավորում է արտաքսումը համաձայնագրերի առկայությամբ, ստանում է համաձայնագիր չունեցող Կողմից արտաքսման հարցում, ապա այն սեփական հայեցողությամբ կարող է դիտարկել սույն Կոնվենցիան, որպես արտաքսման համար իրավական հիմք՝ սույն Հոդվածի պարբերություններ 1 և 2 a) ii) սահմանված օրինախախտումներն էրի առումով: Արտաքսումը պետք է համապատասխանի նաև հարցում ներկայացրած Կողմի օրենքներին:
- iii) Այն Կողմերը, որոնք արտաքսումը չեն պայմանավորում համաձայնագրերի առկայությամբ, պետք է միմյանց մեջ ճանաչեն սույն Հոդվածի պարբերություններ 1 և 2 a) ii) սահմանված օրինախախտումներն էրը, որպես արտաքսման ենթակա օրինախախտումներն էր՝ հարցում կատարած Կողմի օրենքների պայմաններին համաձայն:
- iv) Արտաքսումը պետք է կատարվի համաձայն այն Կողմի օրենքներին, որին ներկայացվել է արտաքսման դիմումը և անկախ սույն պարբերության ենթապարբերություններ b) i), ii) and iii), Կողմը պետք է իրավունք ունենա մերժել արտաքսման դիմումը այն դեպքերում, երբ համապատասխան մարմինները տվյալ խախտումը չեն դիտարկում որպես բավարար լուրջ:

3. Իրավասության պարագայում սույն Հոդվածի դրույթները պետք է համապատասխանեն տվյալ Կողմի քրեական իրավունքի դրույթներին:

4. Սույն Հոդվածի և ոչ մի դրույթ չպետք է ազդի այն սկզբունքի վրա, որով դրանց վերաբերող համապատասխան օրինախախտումներն էրը կսահմանվեն, հետաքննվեն և պատժվեն Կողմի օրենքներին համաձայն:

Հոդված 37

ԿԱԼԱՆՔ ԴՆԵԼԸ և ԱՌԳՐԱԿՈՒՄԸ

Հոդված 36 նշված օրինախախտումներն էրի համար օգտագործված ցանկացած թմրանյութ, նյութ և սարքավորում պետք է կալանքի տակ դրվի և առգրավվի:

Հոդված 38

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԸՆԴԵՄ ԹՄՐԱՆՅՈՒԹԵՐԻ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ

1. Կողմերը պետք է հատուկ ուշդրություն դարձնեն գործնական միջոցառումներին, ձեռնարկեն հատուկ քայլեր թմրամիջոցների չարաշահման կանխարգելման նպատակով, ինչպես նաև համակարգեն իրենց ջանքերը ներգրավված անձանց վաղ

ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԼԵԶՈՒՆԵՐԸ և ՄՏՈՐԱԳՐՄԱՆ, ՎԱՎԵՐԱՑՄԱՆ և ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

1. Սույն Կոնվենցիան, որի Չիններեն, Անգլերեն, Ֆրանսերեն, Ռուսերեն և Իսպաներեն տեքստերը հավասարազոր են, մինչև 1961թ. օգոստոսի 1 պետք է բաց լինի ստորագրման համար Միացյալ Ազգերի ցանկացած Անդամի, ոչ անդամ Պետության կողմից, որը Արդարադատության Միջազգային Դատարանի կամ Միացյալ Ազգերի մասնագիտացված գործակալության անդամ է հանդիսանում, ինչպես նաև ցանկացած այլ պետության համար, որը Խորհրդի հրավերով կարող է Կողմ դառնալ:
2. Սույն Կոնվենցիան ենթակա է վավերացման: Վավերացման փաստաթուղթերը պետք է տրամադրվեն Գլխավոր Քարտուղարին:
3. Պարբերություն 1 նշված Պետությունների համար սույն Կոնվենցիան պետք է բաց լինի նաև 1961թ. օգոստոսի 1 հետո: Վավերացման փաստաթուղթերը պետք է տրամադրվեն Գլխավոր Քարտուղարին:

Հոդված 41³
ՌԺԻ ՄԵԶ ՄՏՆԵԼԸ

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում համաձայն Հոդված 40 վավերացման կամ ընդունման քառասուներորդ փաստաթուղթը ի պահ հանձնելու օրվանից երեսուն օր անց:
2. Նշված քառասուներորդ օրվանից հետո վավերացման կամ ընդունման փաստաթուղթ տրամադրած ցանկացած այլ Պետության դեպքում՝ սույն Կոնվենցիան պետք է ուժի մեջ մտնի այդ Պետության կողմից վավերացման կամ ընդունման փաստաթուղթի ի պահ տրամադրումից երեսուն օր անց:

Հոդված 42
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԻՐԱՌՈՒՄ

Սույն Կոնվենցիան կիրառվում է միջազգային հարաբերությունների բոլոր ոչ-քաղաքային տարածքների համար, որոնց համար Կողմը պատասխանատու է, բացառությամբ այն դեպքերի, երբ այսպիսի տարածքի նախնական համաձայնությունը պահանջվում է Կողմի կամ տարածքի սահմանադրությամբ կամ պահանջվում է սովորույթի համաձայն: Այս դեպքում Կողմը պետք է ջանա հնարավորինս կարճ ժամանակում ստանալ տարածքի համաձայնությունը և երբ այդպիսի համաձայնությունը կա, Կողմը պետք է տեղյակ պահի Գլխավոր Քարտուղարին: Սույն Կոնվենցիան պետք է կիրառվի այն տարածքների կամ տարածքի հանդեպ, որոնք նշված են տեղյակ պահելու գրության մեջ՝ Գլխավոր Քարտուղարի կողմից դրա ստացման ամսաթվից սկսած: Այն դեպքերում, երբ ոչ-քաղաքային տարածքի նախնական համաձայնության կարիք չկա, տվյալ Կողմը ստորագրման, վավերացման կամ ընդունման պահին պետք է հայտարարի այն ոչ-քաղաքային տարածքը կամ տարածքները, որոնց հանդեպ կիրառվում է սույն Կոնվենցիան:

ՍՇ ԻձՕՍ " (b) 1ՇիճիՇ, áñá»è ã÷á÷áĒիՅ օ½ՅՇ ԻáԿի»ԿóՇՅՍՇ ԻձՕՍ ՅՍՊ ԻáԿի»ԿóՇՅՍՇ óՅԿիճóՅի ՅՍԷ ԻձՕՍՇ Ն»ի 1972Ă. շհՕՅՅ. հáóĂՍՅՍմ áիճáիՅ (i»è 1972Ă. շհՕՅՅ. հáóĂՍՅՅ Đá'իՅ 19)!

³ i»è i»հÁ ԿՅիՅ 2 İ»iÁ:

Հոդված 43

ՀՈԴՎԱԾՆԵՐ 19, 20, 21 և 31 ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ

1. Ցանկացած Կողմ կարող է տեղեկացնել Գլխավոր Քարտուղարին, որ Հոդվածներ 19, 20, 21 և 31 նպատակով իր տարածքներից մեկը կիսված է մեկ կամ մի քանի տարածքների կամ որ իր տարածքներից երկուսը կամ ավելին միավորվել են մեկի մեջ:
2. Երկրում կամ ավել Կողմեր կարող են տեղեկացնել Գլխավոր Քարտուղարին, որ իրենց մեջ մաքսային միության ստեղծման արդյունքում, Հոդվածներ 19, 20, 21 և 31 նպատակների համար այդ Կողմերը կազմում են եզակի տարածք:
3. Վերը նշված պարբերություններ 1 կամ 2 ցանկացած տեղեկացում պետք է ուժի մեջ մտնի տեղեկացման տարվան հաջորդող տարվա հունվարի 1-ին:

Հոդված 44

ՆԱԽԿԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

1. Սույն Կոնվենցիայի դրույթների ուժի մեջ մտնելուց ի պահ, Կողմերը պետք է դադարեցնեն և փոխարինեն հետևյալ համաձայնագրերի դրույթները`
 - a) Օպիումի Միջազգային Կոնվենցիա` ստորագրված Հաագայում 1912թ. հունվարի 23,
 - b) Օպիումի պատրաստուկի Արտադրության, Ներքին Առևտրին և Օգտագործմանը վերաբերող համաձայնագիրը` ստորագրված ժնևում 1925թ. փետրվարի 11,
 - c) Օպիումի Միջազգային Կոնվենցիա` ստորագրված ժնևում 1925թ. փետրվարի 11,
 - d) Թմրանյութերի Արտադրման Սահմանափակման և Բաշխման Կանոնակարգման Կոնվենցիա` ստորագրված ժնևում 1931թ. հուլիսի 13,
 - e) Հեռավոր Արևելքում Օպիում Ծխելու Վերահսկման Համաձայնագիրը` ստորագրված Բանգոկում 1931թ. նոյեմբերի 27,
 - f) Լեյք Սուքեսսում 1946թ. դեկտեմբերի 11 ստորագրված Արձանագրությունը, փոփոխված Համաձայնագրերը, Կոնվենցիաները և Թմրանյութերի Արձանագրությունները` ներառյալ Հաագայում ստորագրված 1912թ. հունվարի 23, ժնևում` 1925թ. փետրվարի 11, 1925թ. փետրվարի 19 և 1931թ. հուլիսի 13, Բանգոկում` 1931թ. նոյեմբերի 27 և ժնևում` 1931թ. հուլիսի 13, բացառությամբ վերջին նշված Կոնվենցիայի վրա ազդողների,
 - g) Ենթապարբերություններ a)-ից e) նշված Կոնվենցիաները և Համաձայնագրերը` փոփոխված ենթապարբերություն f) նշված 1946թ. Արձանագրությամբ,
 - h) 1948 նոյեմբերի 19 Փարիզում ստորագրված արձանագրությունը, որը Թմրանյութերի Միջազգային Վերահսկման հովանու ներքո է բերում Լեյք Սուքեսսում 1946թ. դեկտեմբերի 11 ստորագրված Արձանագրությամբ փոփոխված 1931թ. հուլիսի 13 Թմրանյութերի Արտադրության Սահմանափակման և Բաշխման Կանոնակարգման Կոնվենցիայի շրջանակներից դուրս եղած դրույթները,
 - i) Կակաչի Բույսի Մշակման Սահմանափակման և Կանոնակարգման, Օպիումի Արտադրման, Միջազգային և Մեծածախ Առևտրի և Օգտագործման

վերցրել իր համաձայնությունը, չեղյալ հայտարարել սույն Կոնվենցիան իր տարածքում՝ այդ մասին տեղյակ պահելով Գլխավոր Քարտուղարին:

2. Եթե Գլխավոր Քարտուղարը ստանում է չեղյալ հայտարարելու մասին Կողմի դիմումը նախքան հուլիսի մեկը, ապա այն պետք է ուժի մեջ մտնի դրան հաջորդող տարվա հունվարի մեկից և եթե այդ դիմումը ստացվել է հուլիսի մեկին, ապա այն պետք է ուժի մեջ մտնի, ասես այն ստացվել է դրան հաջորդող հուլիսի մեկից առաջ:

3. Սույն Կոնվենցիան պետք է դադարեցվի, եթե համաձայն պարբերություն 1 կատարված չեղյալ հայտարարման արդյունքում, դրա ուժի մեջ մտնելու պայմանները, ինչպես սահմանված են Հոդված 41 պարբերություն 1, դադարում են գոյություն ունենալուց:

Հոդված 47 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ցանկացած Կողմ կարող է փոփոխություններ առաջարկել սույն Կոնվենցիայում: Այսպիսի փոփոխությունների տեքստը և հիմնավորումները պետք է ներկայացվեն Գլխավոր Քարտուղարին, որը պետք է դրանք փոխանցի Կողմերին և Խորհրդին: Խորհուրդը կարող է որոշի՝

a) Առաջարկված փոփոխությունների քննարկման համար խորհրդակցություն հրավիրել՝ համաձայն Միացյալ Ազգերի Կանոնադրության Հոդված 62 պարբերություն 4 կամ

b) որ Կողմերից պետք է հարցվի, թե արդյո՞ղ նրանք հՄձայն են առաջարկվող փոփոխություններին և խնդրեն նաև ցանկացած մեկնաբանություն ներկայացնել Խորհրդին առաջարկության վերաբերյալ:

2. Եթե սույն Հոդվածի պարբերություն 1 *b)* շրջանառության մեջ դրված առաջարկվող փոփոխությունը ոչ մի Կողմ չի մերժել, ապա դրա շրջանառությունից տասնութ ամսվա ընթացքում այն պետք է ուժի մեջ մտնի: Սակայն, եթե ցանկացած Կողմ մերժել է առաջարկությունը, ապա Խորհուրդը կարող է որոշել, կողմերից ստացված մեկնաբանությունների լույսի ներքո, որ անհրաժեշտ է այսպիսի փոփոխությունների քննարկելու համար խորհրդակցություն հրավիրել:

Հոդված 48 ՎԵՃԵՐ

1. Եթե երկու կամ ավել Կողմերի միջև վեճ է առաջանում, կապված սույն Կոնվենցիայի մեկնաբանության կամ կիրառման հետ, ապա նշված կողմերը պետք է խորհրդակցեն և փորձեն վեճը լուծել բանակցությունների, հետաքննությունների, միջնորդության, հաշտեցման, արբիտրաժի, տարածաշրջանային մարմինների միջամտության, դատական կարգի կամ այլ իրենց ընտրությամբ այլ խաղաղ միջոցներով:

2. Ցանկացած այսպիսի վեճ, որը չի կարող վերը նշված կերպով լուծվել, փոխանցվում է Արդարադատության Միջազգային Դատարան:

Հոդված 49 ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՎԵՐԱՊԱՀՈՒՄՆԵՐ

1. Ստորագրման, վավերացման կամ ընդունման պահին Կողմը կարող է իրավունք վերապահել ժամանակավորապես թույլատրել իր տարածքում ստորև բերվածներից ցանկացածը`

a) Օպիումի կիսա-բժշկական օգտագործումը,

b) Օպիումի ծխելը,

c) Կոկայի տերևի ծամելը,

d) Կանաբիսի, կանաբիսի խեժի, կանաբիսի մզվածքի և թրմի ոչ-բժշկական նպատակներով օգտագործումը և

e) a)-ից d) կետերում նշված նպատակների համար թմրամիջոցների արտադրությունը և պատրաստումը և վաճառքը:

2. Պարբերություն 1 սահմանված վերապահումները պետք է ենթարկվեն հետևյալ սահմանափակումների`

a) Պարբերություն 1 նշված գործունեությունները կարող են թույլատրվել միայն այնքանով, որքանով դրանք ավանդական են այդ տարածքներում, որոնց համար կատարվում է վերապահումը և որտեղ դրանք թույլատրված են եղել 1961թ հունվարի 1 դրությամբ:

b) Պարբերություն 1 նշված նպատակների համար թմրամիջոցների ոչ մի արտահանում չի թույլատրվում այն տարածքներ կամ ոչ-Կողմերի տարածքներ, որոնց սույն Կոնվենցիայի Հոդված 42 չի անդրադառնում:

c) Օպիում կարող են ծխել միայն այն անձինք, որոնք 1964թ. հունվարի 1 սույն ազդեցությամբ գրանցված են եղել համապատասխան մարմինների կողմից:

d) Օպիումի կիսա-բժշկական օգտագործումը պետք է վերացվի սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց ի պահ 15 տարի անց` ինչպես սահմանված է Հոդված 41 պարբերություն 1:

e) Կոկայի տերևի ծամումը պետք է վերացվի սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց ի պահ 25 տարի անց` ինչպես սահմանված է Հոդված 41 պարբերություն 1:

f) Գիտական և բժշկական նպատակներից բացի այլնի համար կանաբիսի օգտագործումը պետք է դադարեցվի հնարավորինս շուտ, բայց ցանկացած պարագայում սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց ի պահ 25 տարի անց` ինչպես սահմանված է Հոդված 41 պարբերություն 1:

g) Պարբերություն 1 նշված նպատակների համար թմրամիջոցների արտադրությունը և պատրաստումը պետք է վերջնականապես վերացվի այսպիսի օգտագործման կրճատման և վերացման հետ մեկտեղ:

3. Պարբերություն 1 վերապահումներ կատարող Կողմը պետք է`

a) Հոդված 18 պարբերություն 1 սահմանված Գլխավոր Տնօրենին տրամադրվելիք հաշվետվության մեջ ներառի պարբերություն 1 մեջ նշված նախորդ տարվա ընթացքում օգտագործման, արտադրման կամ վաճառքի առաջընթացը և

b) Տնօրենների Խորհրդին, վերջինիս սահմանված կարգով և ձևով, ներկայացնի առանձին հաշվետվություններ (Հոդված 19) և վիճակագրական արդյունքներ (Հոդված 20)` վերապահված գործունեությունների վերաբերյալ:

4. a) Եթե պարբերություն 1 սահմանված Կարգով վերապահումներ կատարող Կողմը, որը չի կարողանում տրամադրել`

3. Պետությունը, որը ցանկանում է դառնալ Կողմ, բայց ուզում է սույն Հոդվածի պարբերություն 2 կամ Հոդված 49 սահմանված վերապահումներից բացի այդ այլ վերապահումների իրավունք ունենալ, կարող է Գլխավոր Քարտուղարին տեղեկացնել այս մտադրության մասին: Եթե տվյալ վերապահմանը վերաբերող Գլխավոր Քարտուղարին տեղյակ պահելուց մեկ տարվա վերջում սույն Կոնվենցիան վավերացրաց կամ ընդունած Պետությունների մեկ երրորդը առարկություն չի ներկայացրել սույն վերապահման վերաբերյալ, ապա այն պետք է համարվի ընդունված, սակայն հասկանալով, որ Պետությունները, որոնք առարկել են այս վերապահմանը, չպետք է վերապահում կատարող Պետության հանդեպ սույն Կոնվենցիայիով սահմանված իրավական պարտավորություններ կիրառեն:

4. Պետությունը, որը վերապահումներ է կատարել, գրավոր տեղեկացնելով, ցանկացած ժամանակ կարող է ետ վերցնել իր բոլոր վերապահումները կամ դրանց մի մասը:

Հոդված 51
ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

Գլխավոր Քարտուղարը պետք է ծանուցի Հոդված 40 պարբերություն 1 նշված բոլոր Պետություններին՝

- a) Հոդված 40 սահմանված ստորագրությունների, վավերացումների և ընդունումների մասին,
- b) Հոդված 41 սահմանված սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու ամսաթվի մասին,
- c) Հոդված 46 սահմանված չեղյալ հայտարարելու մասին և
- d) Հոդվածներ 42, 43, 47, 49 և 50 սահմանված հռչակագրերի և ծանուցումների մասին: